

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ  
ПАМЯТНИКИ  
АРМЕНИИ

1

ПАМЯТНИКИ  
ЭПОХИ БРОНЗЫ

ВЫПУСК

I

Г. А. МИКАЕЛЯН

ЦИКЛОПИЧЕСКИЕ  
КРЕПОСТИ  
СЕВАНСКОГО БАССЕЙНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1968

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն  
Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Հ ՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ  
1

ԲՐՈՒՉԵՒԼՅՈՒՆ  
ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Պ Ր Ա Կ  
I

Գ. Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ս Ե Վ Ա Ն Ի Ա Վ Ա Չ Ա Ն Ի  
Կ Ի Կ Լ Ս Պ Յ Ա Ն  
Ա Մ Ի Ս Չ Ն Ե Ր Ը

A III  
3393-5  
3409-11

902,6 (47,925)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԿ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1968

Խմբագրական կոլեգիա

Ո. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ս. Գ. ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ.  
Կ. Գ. ՂԱՆԱԴԱՐՅԱՆ, Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.  
Գ. Ա. ՏԻՐԱՅՅԱՆ

Պրակի խմբագիր՝  
Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

THE ARCHEOLOGICAL MONUMENTS  
OF ARMENIA

1

CYCLOPEAN FORTRESSES IN THE BASIN OF LAKE SEVAN  
By G. H. MIKAELIAN  
YEREVAN 1968

Նվիրում եմ վաղամեծիկ դուստրիս՝

Մ Ա Ր Ո Յ Ի

Ռիշատակին

ՀԵՂԻՆԱԿ

1870  
1871  
1872  
1873

## Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սևանա լճի ավազանը գտնվում է Հայկական ՍՍՀ հյուսիս-արևելյան մասում: Լիճը ծովի մակերևույթից բարձր է 1902,8 մետր: Նա շրջապատված է բարձրավանդակներով, սարահարթերով և ընդարձակ հովիտներով, որոնք բոլոր կողմերից ներփակված են բարձր լեռնաշղթաներով՝ հյուսիս-արևմուտքից իր վերջավորությամբ լճին է մոտենում Փամբակի լեռնաշղթան, հյուսիսում և հյուսիս-արևելքում լիճը ծփում է Արեգունի լեռների ստորոտներում, այնուհետև շարունակվում են Սևանի լեռնաշղթայով, որը շրջանցելով լիճը արևելքից, միախառնվում է Վարդենիսի լեռներին: Վարդենիսի լեռների հետ միաձուլվում են լճի արևմտյան կողմում գտնվող Գեղամա լեռները, որոնք ձգվում են դեպի հյուսիս:

Մերձլճյա լեռները գրեթե անտառազուրկ են, բացառությամբ Արեգունի լեռների, որոնց հարավային լանջերը տեղ-տեղ ծածկված են անտառներով: Գեղամա լեռներում հայտնաբերված հնագիտական նյութերը, ինչպես նաև անտառաբնակ կենդանիների ոսկորներն ու եղջյուրները ցույց են տալիս, որ այդ լեռների լանջերը մի ժամանակ եղել են անտառապատ:

Գեղամա լեռնաշղթայի հյուսիսային վերջավորության և Փամբակի լեռների հարավ-արևելյան լանջերի միջև ընկած է մի լայնատարած, ցածրանիստ հովիտ՝ Սևանա լճի մակարդակից էլ ցածր: Այդտեղով հոսում է Հրազդան (հնում Իլդարունի) դետը, որն սկիզբ է առնում լճի հյուսիս-արևմտյան վերջավորությունից: Այդ հովտով, հնագույն ժամանակներից, անցնում է միակ նանապահր Արա-րատյան դաշտից դեպի Սևանի ավազանը:

Սևանա լիճը շրջափակող լեռնաշղթաների ընդհանուր երկարությունը 350 կիլոմետրից ավելի է, լայնությունը՝ 40—80 կմ, առանձին գագաթների

բարձրությունը ավելի քան 3500 մետր (օրինակ՝ Աժդահակ լեռը բարձր է 3598 մետր՝ Գեղամա լեռնաշղթայում): Նշված լեռնաշղթաներից Վարդենիսի ու Գեղամա լեռնաշղթաները առավել ջրառատ են:

Գետերի հովիտները, սարահարթերն ու ձորերը բարենպաստ են հողի մշակության համար, իսկ բարձրադիր լանջերը հանդիսանում են սիզավետ արոտավայրեր, որտեղ դեռ շատ վաղ ժամանակներից մարդիկ զբաղվել են անասնապահությամբ: Այդ են վկայում ուրարտական սեպագիր արձանագրությունները՝ գտնված Սևանի ավազանի տարբեր վայրերում, ինչպես նաև նախուրարտական ժամանակաշրջանի հարյուրավոր բնակատեղիները, կիկլոպյան ամրոցների ավերակները, դամբարանադաշտերն ու այլ հնագիտական հուշարձանները (հարտեզ—սխեմա 1):

Հայկական լեռնաշխարհը, հարուստ լինելով բազմապիսի հուշարձաններով, հատկապես կիկլոպյան ամրոցներով և այդ տիպի այլ կառույցներով, հնուց իր վրա է բեռնել հայ և օտարերկրյա պատմաբանների, հնագետների ու հանապարհորդների ուշադրությունը:

Քերթոզահայր Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» գրքում մանրամասն գրում է Հայաստանի ամրոցների, դաստակերտների, քաղաքների մասին, նկարագրում Վանա բերդը, Արմավիրը, Երվանդակերտն ու Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, Դառնին և այլ հնագույն հուշարձաններ:

Խորենացուց հետո բերդերի, այլ պատմական կոթողների բազմաթիվ նկարագրություններ են թողել միջնադարյան հայ պատմիչները, տեղացի և օտար հանապարհորդներն ու ուսումնասիրողները:

Ֆրանսիացի նանապահրդ Պուլեյ Լկուզին

1647 թ. տեսել ու շափագրել է մի կիկլոպյան կառույց էջմիածնի Աղջաղալա գյուղի շրջակայքում, որը Ք. Թորամանյանի նշումամբ Խզնաուզի (այժմ Արագած) ուրարտական ամրոցն է:

Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանը 1842 թ. «Ստորագրություն էջմիածնի և հինգ գավառացն» աշխատության մեջ հիշատակում է նոր Բայազետ (այժմ Կամո) ֆաղափի Բ եր դ ի գ լ ու խ ամրոցի մասին:

Մեսրոբ Սմբատյանցը՝ սկսած 1862 թ., տասնյակ տարիներ զբաղվել է Հայաստանի և հատկապես Սևանի ավազանի բերդերի, նրանց շրջակայքի սեպագիր արձանագրությունների հայտնաբերումով: Սմբատյանցը մանրամասն նկարագրել է նոր Բայազետի Բ եր դ ի գ լ ու խ ամրոցը և հատկապես նրա ստորերկրյա ճանապարհը դեպի Դավառագետը («Տեղագիր Դեղարձունի Մովազարդ գավառի» գրքում):

Անգլիացի հայտնի ճանապարհորդ (19-րդ դարի վերջերին) Հ. Ֆ. Ռ. Լինչը իր հոշակավոր երկհատոր «Հայաստան» գրքում բազմիցս հիշատակում է Հայաստանի ամրոցները, որոնց հանդիպել է ինչպես Արևմտյան, նույնպես և Արևելյան Հայաստանում:

Ռուս հնագետ Ա. Ա. Իվանովսկին հայտնաբերել է կիկլոպյան մի շարք ամրոցներ Մասիսի հյուսիսային փեշերին և պեղումներ կատարել Տաշրուրունի ամրոցում (ՄԱԿ, VI, 1911 թ.):

Ա. Դ. Նրիցյանը 1880 թ. պեղել է Արմավիրի բարձունքը:

Ակադեմիկոսներ՝ Ն. Յա. Մառը և Հ. Ա. Օրբելին 1916 թ. վանա բերդում և Թոփրսոդ-Կալեյում հայտնաբերել են Վանի ուրարտական թագավորների մի շարք սեպագիր արձանագրություններ:

Հայաստանում և Վրաստանում եղած կիկլոպյան տիպի հուշարձանների ուսումնասիրություններին է նվիրված Մելիֆսեթ-Քեկի «Մեգալիթյան կուլտուրան Վրաստանում» աշխատությունը:

Հետագա տասնամյակներում, 20-րդ դարի սկզբին և հատկապես Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, ավելի լայն ծավալ է ստանում պատմական հուշարձանների, այդ թվում կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությունը:

Հայտնի ազգագրագետ-հնագետ Երվանդ Լալայանը, ազգագրական հարցերից և դամբարանների պեղումներից բացի, զբաղվել է նաև կիկլոպյան ամրոցների, ֆարանձավների, մենհերների և

կրմվեխների հետազոտմամբ, որի արդյունքն են «Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում» աշխատությունը և «Ազգագրական հանդեսի» էջերում եղած նյութերը:

Հայ ճարտարապետության մեծ երախտավոր, գիտության վաստակավոր գործիչ Թորոս Թորամանյանը ուսումնասիրել և շափագրել է բազմաթիվ ճարտարապետական կոթողներ, այդ թվում Անիում, Ջվարթնոցում և այլուր, բազմաթիվ կիկլոպյան ամրոցներ ու շեներ Արագածի հյուսիսային լանջերում՝ Արթիկի, Ախուրյանի (Դուգժյանդ), Թալինի, Աղինի շրջաններում, ինչպես նաև պատմական Արագածոտնում: Ցավոք, այդ շափագրություններից ոչինչ չի մնացել, բոլորն անհետացել են թուրքերի 1918 թ. արշավանքների ժամանակ: Մեծանուն ճարտարապետը ստիպված է եղել նաև ինչպես (Ալեքսանդրապոլ) իր ընտանիքով սարերով փախչում է դեպի Վրաստան: Ք. Թորամանյանը բազմաթիվ հողվածներ է տպագրել պատմական հուշարձանների իր կատարած ուսումնասիրությունների վերաբերյալ:

Շիրակի կիկլոպյան ամրոցները մասամբ ուսումնասիրել է գրող Ատրպետը և հողվածներ տպագրել «Ազգագրական հանդեսում» (25-րդ պրակ, 1913 թ.):

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո անմիջապես կազմակերպվում է Հուշարձանների պահպանության հանրապետական կոմիտե, որը ձեռնամուխ է լինում հանրապետության տերիտորիայում եղած պատմական հուշարձանների, նաև կիկլոպյան ամրոցների ցուցակագրմանը: 1925 թ. Աշխարհբեկ Քալանթարի ղեկավարությամբ կազմակերպվում է մի արշավախումբ, որը լինում է Արագածի արևմտյան լանջերում, նրանք հայտնաբերում, ցուցակագրում ու կազմում են այդ շրջանների հնագիտական ֆարտեզը: Արշավախումբը շրջում է նաև Լոռիում:

1927 թվականին Երախտաշատ Թադևոս Ավդալբեգյանը նոր Բայազետի «Բերդի գլուխ» կոչված ամրոցում հայտնաբերում է ուրարտական թագավոր Ռուսա 1-ինի թողած սեպագիր մի արձանագրություն: Այդ սուրբիվ նա գրել է. «Նոր Բայազդի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը» հողվածը, տպագրված է ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր № 2-ում: Հեղինակը աշխատության մեջ հիշատակում է կիկլոպյան տասը ամրոց, որոնք գտնվում են Բերդի գլուխ ամրոցից ոչ հեռու, 2—6 կմ. տարածու-

թյան վրա: Թ. Ավդալբեգյանը շփարհել ու գետեղել է Բերդի գլխի և Արծվախար գյուղի մոտի «Ջաղացի դարի» կիկլոպյան ամրոցների կառույցները. տալով նրանց հսկիրն նկարագրությունը:

Բերդի գլխի արձանագրության հայտնաբերումով բավականին պարզություն մտցվեց հնագիտության մեջ, հատկապես մինչուրարտական ժամանակաշրջանի տեղանունների հշտման հարցում, որին անդրադարձել է նաև պրոֆ. Գր. Ղափանցյանը:

Բերդի գլխի կիկլոպյան, հետագայում ուրարտական, ամրոցի և այլ կիկլոպյան ամրոցների ուսումնասիրման առիթով ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը գրել է «Կիկլոպյան կառույցները Անդրկովկասում» («Циклопические сооружения Закавказья») աշխատությունը: Նա զբաղվել է նաև Սևանի ավազանի մինչուրարտական տեղանունների հարցերով:

Դրոզ և պատմաբան Լեոն իր աշխատություններում («Հայոց պատմություն») բազմիցս արժանացել է Հայկական լեռնաշխարհում եղած հնագույն ամրոցների հարցերը:

Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցների վերաբերյալ 1933 թ. իրենց ուսումնասիրությունների արդյունքների մասին գրել են Բ. Բ. Պիտրովսկին և Է. Տ. Դյուզալյանը: Նույն հեղինակները Ա. Ս. Աջյանի հետ հրատարակել են «Անդրկովկասյան կիկլոպյան ամրոցներ» աշխատությունը, որտեղ դասակարգել են ամրոցներն ըստ տեսակների, համաձայն իրենց բնորոշ գծերի: Բ. Բ. Պիտրովսկին և Լ. Տ. Դյուզալյանը շփարհել են Նոր Բայազետ Բաղաֆից երկու կիկլոպետ դեպի հարավ գտնվող «Լոթթի ձոր»-ի կիկլոպյան ամրոցը:

Սևանի ավազանի հնագույն հուշարձանների հարցը քննել է նաև Ս. Գ. Բարխուդարյանը: Նա ուսումնասիրել է հատկապես Վելիֆուխի-Ուելիֆուխի (ներկայիս Կամոյի շրջանը) երկրի կիկլոպյան ամրոցները և 1935 թ. հրատարակել մի մենագրություն՝ «Վելիֆուխի երկիրը» վերտառությամբ, որի մեջ ներկայացրել է Կամոյի շրջանում եղած կիկլոպյան 22 ամրոցները, իսկ Հայաստանի պատմական թանգարանի պատվերով Ս. Գ. Բարխուդարյանը կազմել է նրանց տեղագրության քարտեզը: Ցավոք, այդ քարտեզը հիմա թանգարանում չկա: Ս. Գ. Բարխուդարյանը շփարհել է նաև Ղուլալիի (այժմ Կարմիր) բերդ-շենի հատակագիծը (մենք նույն բերդ-շենի շփագրությունը կոչել ենք

«Մաղկավան» Սարուխան գյուղի մոտ), «Ջաղացի դարի բերդի հատակագիծը (անկախ Թ. Ավդալբեգյանի շփագրությունից):

Վ. Վ. Շլեյեր հիսունական թվականներին ուսումնասիրել է կիկլոպյան ամրոցները և դրա հիման վրա գրել թեկնածուական դիսերտացիոն աշխատանք:

Պատմական գիտությունների դոկտոր Հ. Մարտիրոսյանը նույն ժամանակ պեղումներ է կատարել Նորադուս գյուղի մոտի «Հերի դարի» ամրոցի շրջակայքում: Դամբարաններից հայտնաբերված նյութերը առնչվում են ամրոցի կյանքի հետ: Այժմ նրա ղեկավարությամբ պեղվում է Նոր Արմավիր գյուղի մոտի «Դավթի բլուրը», որտեղ ուրարտական բերդ-բաղաֆ է եղել:

Նման պեղումներ է կատարում պատմական գիտությունների դոկտոր Բ. Ն. Առաքելյանը Արմավիր գյուղի մոտի բարձունքի վրա եղած ամրոցում, որը մինչևժամանակյան կարգերը պեղել սկսեց, բայց չվերջացրեց Ա. Գ. Երիցյանը:

Մի քանի տարի է, ինչ պատմական գիտությունների թեկնածու Հ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ պեղվում է Լճաշենի կիկլոպյան ամրոցը, բնակավայրը և նրա շրջակայքի դամբարանները:

Գ. Ա. Մելիֆիշվիլին իր երկու մեծածավալ աշխատություններում, քննելով Հայաստանի տերիտորիայում գտնված արձանագրությունները, լայնորեն լուսաբանել է մինչուրարտական ժամանակաշրջանի Սևանի ավազանի բնակատեղիների, ապա նաև կիկլոպյան ամրոցների տեղադրման հարցերը:

Կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությամբ զբաղվում են նաև պատմական գիտությունների թեկնածու Ս. Ա. Եսսյանը և երիտասարդ ճարտարապետ Կ. Կ. Ղաֆսադարյանը, նրանք տվել են Շամշադինի շրջանի կիկլոպյան երեք ամրոցների նկարագրությունը:

Հարկ է նշել, որ Ադրբեջանական ՍՍՀ-ում գրտնվող կիկլոպյան կառույցների ուսումնասիրությամբ երկար տարիներ զբաղվել է և շարունակում է զբաղվել Ի. Ջաֆար-Ջադեն, որը հայտնաբերել է ավելի քան 30 ամրոց: Նրան է պատկանում նաև Ադրբեջանում ժայռապատկերների հայտնաբերման ու նկարագրության պատիվը:

Պրոֆեսոր Խ. Սամվելյանը իր «Հին Հայաստանի կուլուրան» աշխատության մեջ բազմիցս անդրադարձել է կիկլոպյան տիպի հուշարձաններին:





Սևանա լճի արևմտյան, հարավային ու հարավ-արևելյան ափերին, մինչև ուրարտացիների երեկվալը, ապրել են ցեղեր ու ցեղախմբեր, որոնց բնակատեղիներն ու ամրոցները հիմնականում տեղաբաշխված են եղել գետերի հովիտներում: Այդպիսի հովիտները կամ հովտախմբերը Սևանի ավազանում հաշվում ենք չորսը:

Առաջինը Գավառագետի հովիտն է իր մերձակա վայրերով, որտեղ եղել է Ուելիկովսի կամ Վելի-ֆուսի երկիրը, իր կազմում ունենալով ֆաներկու ամրոց (որոնք հայտնաբերել ու չափագրել ենք), կիկլոպյան տիպի յոթ բնակավայր: Ուելիկովսին իր հյուսիսում ունեցել է սահմանագերծ կիկլոպյան պարիսպ: Այս երկիրը գրավել է ավելի քան 1500 ֆառ. կիլոմետր տարածություն և իր հզորությամբ զգալի դեր է խաղացել Սևանի ավազանի այն ժամանակվա կյանքում: Ուելիկովսի երկրի կենտրոնական ամրոցը գտնվել է Կամո ֆաղափի կենտրոնում՝ բարձունքի վրա, որը տեղացիները «Բերդի գլուխ» են անվանում:

Ուրարտական զորքերը նվաճելով, տակն ու վրա են արել այդ ամրոցը ու վերակառուցելով այն՝ անվանել խալդ աստծո ֆաղափ: Դա հաստատվում է Սարդուրիի որդու՝ ուրարտական թագավոր Ռուսայի արձանագրությամբ, որը գտնված է Բերդի գլխում:

Երկրորդ նշանակալի հովտախումբը Մակֆարի և Արգինա գետերի հովիտներն են ներկայիս Մուրտունու շրջանում: Մինչև ուրարտացիների զարթոյնը վայրերը միավորվել են «Լուրուսի» երկրի կազմում՝ Տուլիսու կենտրոնական ֆաղափով, որը տեղադրվում է Աղամխան գյուղից մեկ ու կես կիլոմետր դեպի արևելք ընկնող «Քոնեֆ» կոչված կիկլոպյան ամրոցի շրջակայքում: Այստեղ հայտնաբերվել է ուրարտական թագավոր Արգիշտիի որդի՝ Սարդուրիի սեպագիր արձանագրությունը:

Հովիտների երրորդ խումբը բռնել է Վարդենիս գետի և այլ մանր գետակների ափերն ու սարահարթերը՝ կենտրոն ունենալով Մովիներ և Ալուչալու գյուղերի մեջ ընկած բարձունքի վրա գտնված ամրոցը, որը տեղացիները «Օձաբերդ» են անվանում: Ուրարտացիները գրավելով, ավերել են այս ամրոցը ևս, տեղը կառուցել նորը՝ Թեյշեբա աստծո անունով, ինչպես դա երևում է նույն ամրոցի հյուսիսային կողմի ժայռի նակստին Ռուսայի թողած սեպագիր արձանագրության բովանդակությունից:

Մինչ ուրարտական էֆսպանսիան այդ շրջանը, ըստ պրոֆ. Գր. Ղափանցյանի, կոչվել է Ադսիսունի երկիր:

Կիկլոպյան ամրոցների շարքող խումբը, համարում ենք այն ամրոցները, որոնք տեղադրված են Մովակ (Ջաղալու) գյուղի մոտի ամրոցի շրջակայքում: Այս ամրոցը ուրարտացիների կողմից նույնպես գրավվել է և վերակառուցվել ըստ իրենց ռազմական արվեստի պահանջմունքների և հանդիսացել է մի ուժեղ պատվար Սևանի ավազանի հարավ-արևելյան և արևելյան մասում:

Մովակի ամրոցի մոտ, մի ժայռի հակաստին կա ուրարտական արձանագրություն՝ գրված վանի թագավոր Սարդուրի II-ի կողմից: Արձանագրությունը հուշում է, որ այդ երկիրը կոչվել է Արկուկինի, որը Սևանի ավազանի արևելյան կողմում հայտնաբերված արձանագրություններից ամենահեռավորն է, որից դեպի արևելք այլ արձանագրություններ չեն հայտնաբերվել:

Արևելյան ափերին հայտնաբերվել են երկու կիկլոպյան ամրոց, սակայն դեռ չի պարզվել, թե արդյոք ուրարտացիները եղել են լճի արևելյան ափերին:

Կիկլոպյան ամրոցների մի խումբ էլ գտնվում է Լնաշեն գյուղի մոտի ամրոցի շրջակայքում, որոնք զորեղ պաշտպանական հանգույց են եղել՝ փակելով թշնամիների առաջ մուտքը դեպի լճի արևմուտյան, հարավային ու հարավ-արևելյան ափերը:

Ուրարտական թագավոր Արգիշտի I-ը արձանագրություն է թողել Լնաշեն գյուղի մոտի մի ժայռի վրա, որում ասված է. «...Նվանեցի Կիսիսունի ֆաղափի երկիրը: Հասա մինչև Իշտիկունիվ ֆաղափը...»: Հավանաբար, Լնաշենը իր շրջապատով եղել է Կիսիսունի ֆաղափի երկիրը:

Այս հինգ ամրոցախմբերը, ինչպես ենթադրում են գիտնականները, միավորված են եղել Ուրուրի-Էտիունի ընդհանուր երկրի կազմում:

Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները և այլ հուշարձանները ֆանակական հետևյալ բաշխումն ունեն ըստ ժամանակակից վարչա-տեղիտարիալ շրջանների.

Սևանի շրջանում՝ կիկլոպյան 10 ամրոց, երեք բնակավայր և մի ֆանի դամբարանադաշտ, հիմնականում փոխված լճի ափերին և ցամաքած տեղերում:

Կամույի (Նոր Բայազետի) շրջանում՝ կիկլոպյան 22 ամրոց, յոթ բնակատեղի, սահմանազատող պարիսպ, բազմաթիվ դամբարանադաշտեր, որոնք

ցույց են տալիս այդ երկրի (Ուելիֆուխի—Գ. Մ.) իրտ բնակվածությունը:

Մարտունու շրջանում հայտնաբերվել է նույնպես կիկլոպյան 22 ամրոց, մեծ ֆանակոթյամբ դամբարանադաշտեր, կրավեխներ, ֆարանձավներ, որոնք մարդկային կացարաններ են եղել, սահմանապահ (4—5 կմ. երկարությամբ) կիկլոպյան պարիսպ:

Բասարգեշարի (Վասկաշեն) շրջանում կա կիկլոպյան երեք ամրոց, մեծաֆանակ դամբարանադաշտեր, դումեններ:

Կրասնոսելսկի շրջանի՝ Սևանա լճի՝ արևելյան ափերին հայտնաբերվել է կիկլոպյան 2 ամրոց և դամբարանադաշտեր՝ դրանց շուրջը:

Նշված շրջաններում, մինչև այժմ տարբեր ժամանակներում, զանազան ուսումնասիրողների կողմից հայտնաբերվել ու վերծանվել են ուրարտական հինգ սեպագիր արձանագրություն, որոնցից երեքը այժմ գտնվում են իրենց տեղերում (Լնաշեն, Մովինար, Մովակ): Կամո ֆաղափի Բերդի գլխի արձանագրությունը գտնվում է Հայաստանի Պետական պատմական թանգարանում, մյուսը՝ Ադամիան գյուղի մոտ գտնվածը, մինչև սովետական կարգերի հաստատումը տարվել է Թբիլիսի:

Նույն սահմաններում հայտնաբերվել է արամեատառ 6 արձանագրություն:

Հնագույն ժամանակներում մարդուն որպես կացարան են ծառայել բնական և ապա արհեստական այրերը, որոնցով հարուստ է Սևանի սվազանը (Անափ, Աղկալա, Հերի դար, Պառավի վանք, Նեղբողագ, Սանգար և շատ ուրիշներ): Սրանք թշնամիներից, զագաններից և բնական արհավիրքներից պաշտպանել են մարդուն: Կացարան-ֆուրանձավների մուտքերը, որպես կարգ, ամրացվում էին հսկա ֆարերից կառուցված կիսաշրջանաձև պատնեշներով, որոնց հետքերը մնացել են առ այսօր:

Սևանի սվազանի ամրոցներն ու բնակավայրերը կարելի է բաժանել չորս ժամանակագրական խմբերի.

Առաջին շրջանի ամրոցների խմբին կարելի է դասել անտաշ ու անշաղախ, հասարակ խոշոր ֆարերով շարված կառույցները: Եթե պարիսպը երկշար է, ապա շարերի մեջ մանր ֆարեր ու խին շի լցված: Բնակատեղին այդ ձևով պարսպապատվել է սուանց միջնաբերդի և ճարտարապետական հստակ ձևավորման: Հանախ բնակավայրերի ծայրամասային կացարանների արտաքին պատերի միացումով գոյանում էր բնակավայրի արտաքին

պարիսպը: Այսպիսի ամրոց-շեներից շատերը դարերի ընթացքում կատարելագործվել են ու մասամբ միայն պահպանել իրենց նախկին տեսքը (Լնաշեն, Նեղբողագ և ուրիշ ամրոցներ):

Այս տիպի կառույցները գոյություն են ունեցել թերևս հինգերորդ-չորրորդ հազարամյակներից մինչև երրորդ հազարամյակի կեսերը (մ. թ. ա.):

Երկրորդ շրջանի կառույցները վերաբերում են երրորդ հազարամյակի կեսերից մինչև 8-րդ դարը (մ. թ. ա.), այսինքն ուրարտացիների Սևանի սվազանում ժամանակին: Դա ցեղերի ու ցեղային խոշոր միությունների վերջնական ձևավորման ժամանակաշրջանն է, առհմայն-ցեղային կարգերի փլուզման սկիզբը, երբ բազմաթիվ ցեղեր ընդհանուր վտանգի ժամանակ թշնամու դեմ հանդես էին գալիս միացյալ ուժերով (Ուդուրի-Էտիունի): Այս շրջանում վերափոխվում ու վերակառուցվում են հին ամրոցներից շատերը, կառուցվում են բազմաթիվ նորերը, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվում միջնաբերդին: Ամրոց-շեների մի մասը կորցնում է իր զուտ ռազմական նշանակությունը: Դրանք հավանորեն ստանում են գլխավորապես տնտեսական (անասնապահական) նշանակություն: Այդ կարգի ամրոցներին կարելի է դասել Յոթն աղբյուրի ամրոցաշենը, Արծվաֆար գյուղի մոտի Ժամի դարի, Ջաղացի դարի ամրոցները, Մոթթի ձորի, Ջանդոյի դարի, Յոնջալղի, Աղի բերդերը, Ալոյի Կողի, Քրդի դոշի, Մարտունի սվազանի մոտի բերդշենը և այլ ամրոցներ: Ռազմական մեծ նշանակություն ունեցող ամրոցներ այդ էպոխայում, պետք է համարել Մեծեփի, Լնաշենի, Կամո ֆաղափի Բերդի գլխի, Պառավի վանքի, Մաղկավանքի, Սանգարի, Ադամիան գյուղի մոտի Քոնքի, Դաշտաձորի, Օնաբերդի, Քարե-դուռ (Տաշ-կալիու), ամրոցները: Նույն դարաշրջանի արգասիք պետք է համարել նաև սահմանագատող կամ սահմանապահ պարիսպների կառուցումը:

Ամրոցաշինությունը Հայկական լեռնաշխարհում նոր թափ է ստանում ուրարտական տիրապետության շրջանում: Սկսած մ. թ. ա. 9-րդ դարից կառուցվում են այնպիսի հզոր ամրոցներ, ինչպիսիք են՝ Վանի (Տուշպա), Թովուրախ կալալի, Տաշբուրունի և ուրիշ շատ ամրոցներ Արևմտյան Հայաստանում, Արմավիրի, Նոր Արմավիր գյուղի մոտի Դսվթի բլուրի, Արին բերդի, Կարմիր բլուրի, Նոր-Քայազետի, Օձաբերդի և այլ ամրոցներ՝ Սովետական Հայաստանի տերիտորիայում: Այդ ժամանակաշրջանում նախկին կիկլոպյան ամրոցներից շա-

տները ավերվում են ու նրանց տեղը նորը կառուցվում, կամ հինը վերակառուցվում է ուրարտական ռազմական արվեստի պահանջներից ելնելով: Դրանք ռազմական հզոր հենակետեր են հանդիսացել Վանի թագավորության համար, նախ հարձակվող թշնամիներից պաշտպանվելու, ապա գրաված երկրների ցեղերին հնշելու համար:

Ամրոցաշինության այս շրջանը համարում ենք երրորդ շրջան՝ 9-րդ դ.—6-րդ դ. սկիզբը (մ. թ. ա.):

Վերջապես, չորրորդ շրջանի ամրոցափմբին կարելի է դասել այն բոլոր ամրոցները, որոնք կառուցվել կամ վերակառուցվել են վաղ հայկական, հելլենիստական ու վաղ միջնադարյան ժամանակներում: Այդ ամրոցների թվին կարելի է դասել Սեվսնի ավազանի Դարանլուզ գյուղի մոտի Ալբերդ, Ակունք գյուղի մոտի Կլուր-դարի ամրոցները, Աստղածոր գյուղից Յ կմ. դեպի հարավ գտնվող Վանքի ամրոցը, Կարմիր գյուղի ձմեռանոցում գտնվող ամրոցը:

Սևանի շրջանում ցույց է տրված տասը ամրոց, սակայն պահպանված տեղ են գտել միայն ութը, որոնց թվում երկու՝ Ցամաքաբերդի և Սևանա կղզու ամրոցների մասին միայն հիշատակել ենք, առանց շափագրության, քանի որ այդ ամրոցներից գրեթե ոչինչ չի մնացել: Առանձին շափագրությամբ ցույց է տրված Լհաչենի ամրոցի առաջին միջնաբերդը: Երեք ամրոցի մասին՝ Մաղկունք, Դղմաշեն և Յայջի գյուղերի մոտի, չենք իմաստ, քանի որ դրանք գտնվում են Փամբակի լեռների հարավային լանջերին: Այն թողնում ենք հերթական պահի հա-

մար: Դրանք կդասվեն Հրազդան գետի ավազանում եղած ամրոցների շարքը:

Մարտունու շրջանում ցույց է արված քսաներկու ամրոց, բայց պահպանված տեղ են գտել միայն 17-ի շափագրությունները: Հինգ ամրոց, որոնք գտնվում են Արգիևի դաշտավայրում, չնայած մտնում են Սևանի ավազանի սահմանների մեջ, պահպանված չեն, որովհետև հայտնաբերվեցին 1966 թվ. ամռանը, երբ պահպանված արդեն պատրաստ էր: Այն թողնում ենք այլ պահի համար, որպես հավելված:

Այսպիսով, սույն պահով տրված է Սևանի ավազանում հայտնաբերված կիկլոպյան ամրոցների ու նման հուշարձանների նախնական ուսումնասիրությունը և եթե այս համեստ աշխատանքը կօժանդակի նրանց, ովքեր զբաղվում են կիկլոպյան ամրոցների և նման հուշարձանների ավելի խոր ուսումնասիրությամբ, հեղինակը լիառատ վստահությամբ կլինի:

Հեղինակը հավակնություն չունի այս աշխատությամբ Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցների և նման այլ հուշարձանների ուսումնասիրությունը վերջնականապես ավարտված համարելու:

Ուսումնասիրված ամրոցների զգալի մասը հանութագրվել է Դուրգեն Գուրգենյանի և Վահագն Իսրայելյանի կողմից, որի համար մեր գոհունակությունն ու շնորհակալություն ենք հայտնում: Չենք կարող շնորհակալությամբ շնորհել այն գիտնականներին ու բնկերներին, որոնք իրենց խորհուրդներով և օժանդակությամբ օգնել են կազմելու սույն պահը:

## ՍՆՎ.Ս.ՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԻԿԼՈՊԵՍ.Ն ԱՍՐՈՑՆԵՐԸ

Սեանի շրջանը գրավում է Սեանա լճի հյուսիս-արևմտյան վերջավորութիւնը: Սեան քաղաքի մոտ լճից սկիզբ է առնում Հրաղզան գետը և հոսում դեպի արևմուտք, ապա հարավ, հասնում Արարատյան դաշտ, իր ճանապարհին ոռոգելով դաշտերն ու այգիները (քարտեզ-սխեմա 2):

Հնագույն ժամանակներից ի վեր Հրաղզանի հովիտը հանդիսացել է միակ ճանապարհը դեպի Սեւանի ավազանը, որտեղով անցել են հավանորեն նաև ուրարտական նվաճողները:

Սեանի շրջանը, որպես Սեանի ավազանի նախադուռ հյուսիսից, հարուստ է կիկլոպյան ամրոցներով, որոնցից մի քանիսի մասին կիսովի ստորև:

Ոճաշենի ամրոցը (հանույթ 3): Լճաշեն գյուղը, նախկինում Պորտակ, գտնվում է Սեան քաղաքից երեք կիլոմետր դեպի հարավ, որի միջով անցնում է Սեան-Կամո մայրուղին: Նա տեղավորված է Գեղամա լեռնաշղթայի վերջավորութիւնի վրա, որտեղից սկսվում է Գեղամա ու Փամբակի լեռների միջև փոփոկ հարթավայրը: Լճաշեն գյուղը և ամրոց-բնակավայրը արևելքից եզերվում են Սեանա լճի հյուսիս-արևմտյան ափերով:

Գյուղից հարավ ընկած բլուրները բնական արգելակ են հանդիսանում հյուսիսից դեպի հարավ:

Հանրահայտ է, որ Լճաշեն գյուղից դեպի արևելք, այն մասում, որտեղ լիճը շուրջ երեք կիլոմետր ետ է գնացել, բացվել է դամբարաններով հարուստ, բավականին ընդարձակ տարածութիւն: Հայտնաբերվել են կացարանների պատերի մնացորդներ, որոնք վերաբերում են բրոնզի դարաշրջանին:

Լճի ցամաքած տեղում հայտնաբերված բնակատեղիից ոչ հեռու, Սեան-Կամո ճանապարհի ձախ կողմից, 15—20 մետր հեռու քարաժայռի ճակատին, երեսով դեպի լիճը, պահպանվել է սեպագիր

արձանագրութիւն՝ գրված ուրարտական Արգիշտի I թագավորի անունից:

Գյուղի հարավային ծայրամասում բարձրացող բլուրների վրա գտնվում են Լճաշենի հայտնի կիկլոպյան ամրոցն ու նրան շրջապատող բնակատեղին, որը գրավում է ավելի քան 35 հեկտար տարածութիւն, և տարածվում է 15 բլուրների, նրանց լանջերի ու ձորակների վրա:

Ամրոցն իր դիրքով (50—100 մետր) բարձունքներից իշխում է շրջակայքի վրա:

Ամրոցի և բնակավայրի արտաքին բերդապարիսպների ընդհանուր երկարութիւնը հասնում է շուրջ 5000 մետրի. տերիտորիան խիստ քարքարոտ է: Ամրոցը և շրջակայքը ջրազուրկ են:

Լճաշենի ամրոցն ունի երկու միջնաբերդ և քսաներկու մանր ու խոշոր քարաբուրգեր ու աշտարակներ: Ամրոցի, ինչպես նաև միջնաբերդերի տերիտորիաները ծածկված են կացարանների բազմաթիվ ավերակներով: Ամրոցի շուրջը, նույնպես, երևում են կացարանների ավերակներ:

Ամրոցն ու բնակատեղին շրջապատված են եղել բարձր ու լայն պարիսպներով: Վերջիններս կառուցվել են խոշոր բազալտ ժայռաքարերի բեկորներով: Քարերն անտաշ են, սակայն պարսպի որմերում հարմարեցված են այնպես, որ նրանց առավել հարթ կողմերը նայում են դուրս: Պարսպի լայնութիւնը երեք ու կես մետր է, իսկ դյուրին խոցելի տեղերում, ինչպես նաև միջնաբերդի մուտքերի մոտ, նրա լայնութիւնը հասնում է հինգ և ավելի մետրի: Պատերի երկշարքերի մեջ լցված են փոքր քարեր ու խիճ: Պարիսպը կառուցվել է բլուրների բարձր լանջերի վրա, որոնք իրենց մեջ են ընդգրկել առավել անմատչելի ժայռաբլուրներ, և հզոր քարաբուրգերը տեղադրվել են ամենաբարձր բլուրների գագաթներին: Պարիսպները կառուցվել

են ոչ ուղիղ գծով, որպեսզի հնարավորութիւն տրվի ամրոցի պաշտպաններին՝ տարբեր ուղղութիւններէից նետահարել կամ քարկոծել ամրոցը գրոհող թշնամուն (աղյուսակ 6):

Այսպիսով, ամրոցն իր բազմաթիւ կառուցներով, մուտքերով, գաղտնուղիներով, աշտարակներով ու որմահերցերով, միմյանց հատող պարիսպներով նման է մի վերերկրյա լաբիրինթոսի: Այսպես, ամրոցի հարավ-արևելյան մասում, որտեղ արտաքինից դիտվում է ամրոցի ներսը, ամրոցի տերերը, օգտագործելով բնական փոքրիկ կիրճերը, դրանք ընդլայնել, խորացրել ու երկարացրել են՝ դարձնելով թաքստոց: Արհեստական այդ շավիղների ընդհանուր երկարութիւնը հասնում է 200 մետրի, որոնց հատակը որոշ տեղերում սալահատակված է: Նրանք ճյուղավորվում են, հատկապես դեպի ամրոցի ընդհանուր պարսպի հարավային և արևելյան աշտարակները:

Լճաշենի ամրոցի առաջին միջնաբերդը (հանույթ 4) կառուցված է ամրոցի արևելյան մասում եղած ամենաբարձր՝ ձվաձև, արևելքից-արևմուտք ընկած բարձունքի վրա, ունի ավելի քան մեկ հեկտար տարածութիւն: Միջնաբերդի շուրջը տարբեր բարձրութեան վրա կառուցված են երեք շարք պարիսպներ, որոնք տեղ-տեղ հիմնահատակ կործանվել են: Նրա վրա երևում են բնակելի տների հետքեր: Պեղումներից հայտնաբերվել են խեցեղենի բեկորներ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների բազմաքանակ ոսկորներ: Սենյակների վերին շերտերում բացվեցին ջարդված կարասներ ու թոնիրներ, որոնք, մեր կարծիքով, ուշ ժամանակների կուլտուրայի մնացորդներ են: Ստորին շերտում հայտնաբերվեցին ուրարտական և նախաուրարտական էպոխաներին վերաբերող հնագիտական նյութեր, ինչպես նաև վաղ բրոնզեդարյան շրջանի խեցեղենի բեկորներ (կացարան 8ր):

Կացարանների պատերը հաստ են (1,5 մ.), շարվածքը՝ առանց շաղախի, բնական ժայռերը օգտագործվել են որպես պատ, որտեղ դա հնարավոր է եղել:

Միջնաբերդի բնակավայրերի պեղումներից ստացված նյութերը ցույց են տալիս, որ լճաշենի ամրոցը կառուցվել է դեռևս վաղ բրոնզեդարյան շրջանում, իսկ ուշ բրոնզի ժամանակ այն զգալի չափերով ընդլայնվել ու վերակառուցվել է:

Առաջին միջնաբերդի արևմտյան պարսպի մոտիկ կացարան-դահլիճի ամենաստորին շերտից (2,2 մետր) հայտնաբերվեցին վաղ բրոնզեդարյան է-

պոխայի խեցեղենի բեկորներ: 11-րդ սենյակի հյուսիս-արևելյան պատի տակ հայտնաբերվեցին հնոցներ (1,4 մ.): Փոսը լցված էր մոխրով և վառված փայտածուխի փշրանքներով, շուրթերը շարված էին մեկ շարք քարերով, խորութիւնը 40 սմ. էր: Կրակարանն ուներ մոտ մեկ մետր տրամագիծ: Այդտեղից քիչ հեռու (1,8 մետր) գտնվեց բազալտ մի քար, որի մեկ երեսը հղկված ու փորագրված է: Փորագրութիւնը թերևս հիշեցնում է գոտի ձուլելու կաղապար: Փորագրված մասն ունի կարմրավուն գույն, քարի ընդհանուր մակերեսից ցածր է 1,7 սմ., լայնութիւնը 13,5 սմ. է՝ երկարութիւնը՝ 38 սմ.:

Կրակարանի փոսն ունի 25—30 սմ. խորութիւն, որի մեջ գտնվեց կիսահալ վիճակում երկաթ: Դացույց է տալիս, որ տեղի այդ ժամանակվա բնակիչներին երկաթի գործածութիւնը ծանոթ է եղել:

Փոսից մեկ ու կես մետր հեռու գտնվեց մի այլ կրակարան, նույն մակարդակի վրա, որը նույնպես լցված էր փայտածուխի մնացորդներով և մոխրով: Ի տարբերութիւն առաջին փոսի, սա ուներ քառանկյունի ձև (60×40 սմ.), դռնակը (բաց կողմը) նայում էր դեպի առաջին փոսը: Նրա կողերին դրված էին բազալտ քարեր 50—60 սմ. երկարութեամբ և 25—30 սմ. բարձրութեամբ: Հավանորեն այդ երկու կրակարանները կապված են եղել միմյանց հետ:

Միջնաբերդը ունեցել է շորս մուտք: Առաջինը՝ արևմտյան կողմում, որը հետագայում, ըստ եկվույթին, շարվել ու փակվել է, ունեցել է վեց մետր լայնութիւն, նրա երկու կողմերում բարձրացել են երկու հզոր աշտարակներ: Այդ մուտքին մոտեցել է շորս մետր լայնութիւն ունեցող ճանապարհ, որը երկրորդ պարսպագոտու մոտով անցնելով դեպի արևմուտք, թեքվում է ու միանում միջնաբերդի հյուսիսային մուտքից դուրս եկող ճանապարհին ու իջնելով դեպի հյուսիս-արևմուտք՝ բնակավայրի ցածրանիստ մասում միանում է երկրորդ միջնաբերդից իջնող ճանապարհին: Այս մուտքից դուրս եկող ճանապարհն իր արտաքին եզրում ունեցել է բարձր պարիսպ (աղյուսակ 5):

Միջնաբերդի երկրորդ մուտքը դարձված է դեպի հյուսիս: Այս մուտքը հավանորեն գոյութիւն ունի միջնաբերդի կառուցման առաջին իսկ օրերից, միայն հետագայում նա վերակառուցվել է: Մուտքի երկու կողմերում կան խոշոր աշտարակների հիմքեր, որոնց շորս մետր բարձրութիւնը մինչ այժմ էլ պահպանված է: Աշտարակների որմի քարերը փոքր-ինչ տաշված, միմյանց հարմարեցված, մին-

չև կրկու խորանարդ մետր ծավալ ունեցող բազալտ բարեր են: Այս մուտքից դուրս եկող ճանապարհի արտաքին եզրը նույնպես պարսպապատված է եղել:

Միջնաբերդի ներսում, մուտքին զուգահեռ, երկու կողմերից երևում են շենքերի պատերի հիմքերը:

Միջնաբերդի արևելյան և հարավային մուտքերը ավելի նեղ են, ըստ երևույթին հետիոտն ելումուտի համար: Այս մուտքերը խիստ թեթև լանջերով իջնում են դեպի բնակավայրերը: Հարավային մուտքի մոտ երևում են քարե աստիճանների հետքեր, որոնք իջնում են դեպի բնակատեղ:

Միջնաբերդի ունի երեք պարիսպներ, որոնք շրջապատում են միջնաբերդի բարձունքը բոլոր կողմերից: Պարիսպների միջև ընկած տարածությունը, լանջի ուղիքին համապատասխան, 15—30 մետր է, որտեղ նշվել են կացարաններ:

Պարիսպների լայնությունը նույնն է, ինչ ամրոցինը (3,5—5 մ.), քարերի մեծությունը առանձին դեպքերում հասնում է երեք խորանարդ մետրի, բարձրությունը տեղ-տեղ պահպանվել է մինչև հինգ մետր:

Միջնաբերդի բարձունքի գագաթի տարբեր կետերից դեպի ստորոտ են իջնում երեք պարիսպ, որոնց մեջ բացված են մուտքեր: Առաջին պարիսպը իջնում է միջնաբերդի հարավ-արևելյան անկյունից մինչև ստորոտ և հատում ամրոցի հորիզոնական պարիսպները: Երկրորդ պարիսպը իջնում է բարձունքի հյուսիս-արևելյան անկյունից, որի մեջ ավելի որոշակի երևում է գաղտնի անցքը: Երրորդ պարիսպը իջնում է բարձունքի հարավ-արևմտյան անկյունից և միաձուլվում բնակավայրի պարսպի հետ:

Ուղղաձիգ պարիսպների կառուցվածքը չի տարբերվում ամրոցի մյուս պարիսպների կառուցվածքից:

Երկրորդ միջնաբերդը գտնվում է ամրոցի հյուսիս-արևմտյան ծայրամասում, առաջին միջնաբերդից 300 մետր հեռու գտնվող գոգավոր բլրի վրա, Սևան-Կամո ճանապարհի անմիջապես եզրին, ունի 25—30 մետր բարձրություն:

Միջնաբերդը գրավում է մոտ մեկ հեկտար տարածություն՝ ծածկված բնակարանների ավերակներով:

Միջնաբերդի բարձունքն ունի գագաթի եզրերով անցնող չորս մետր լայնությամբ պարսպի հիմքեր: Բացի հիմնական պարսպից, այստեղ երևում են

նաև կրկնապարսպի մնացորդներ: Միջնաբերդն ունի մեկ մուտք, իր հարավ-արևելյան մասում: Մուտքի աջ ու ձախ պարիսպների հիմքերը ավելի լայն են, քան ընդհանուր պարսպինը: Հավանաբար, այստեղ եղել են աշտարակներ:

Միջնաբերդի մուտքը բացված է դեպի արևելյան կողմում եղած բնակատեղին:

Տարբեր ժամանակաշրջանների են պատկանում ամրոցի զանազան հանգույցները: Ամրոցի և բնակավայրի պարիսպների ու պատերի անտաշ ու անձև հսկա շարվածքները տարբերվում են ուրարտական ժամանակաշրջանի շինություններից, մինչդեռ միջնաբերդերի, նրանց կից որոշ շենքերի շինարարությունը խիստ տարբերվում է վերը նշած պատերից ու պարիսպներից: Այստեղ նշմարվում են լարաշար պատեր, քարերը՝ տաշված և մշակված, ուղորկ կողերը՝ դարձված դեպի դուրս: Միջնաբերդերի մուտքերի ու աշտարակների շարվածքը կատարված է ավելի խնամքով, որը կասկած չի հարուցում, որ սա կատարվել է ավելի ուշ ժամանակաշրջանում:

Մեծեփի ամրոցը (հանույթ 7) գտնվում է Սևան քաղաքից մեկ կիլոմետր դեպի հյուսիս ընկած մի բարձունքի վրա, որը Փամբակի լեռնաշղթայի ամենահարավային գագաթներից մեկն է: Բարձունքը արևելքից, հարավից և արևմուտքից խիստ թեթևությամբ, կոնաձև վեր է խոյանում, որի լանջերը ծածկված են հրաբխային տուֆի կամ այլ կոնգլոմերատի բեկորներով: Գագաթը շրջապատից բարձր է մոտ 600 մետր և խիստ դժվարամատչելի է: Տեղացիների մոտ բարձունքը հայտնի է «Մեծեփ» անունով, որի վրա կա ավերակ մի մատուռ, նույն անունով:

Գագաթի կոնֆիգուրացիային համապատասխան, եզրերով անցնում են կիկլոպյան ամրոցի պարիսպների հիմքերը, որոնց բարձրությունը տեղ-տեղ պահպանվել է մեկ-երկու շար քարերով: Ամրոցն ունի 225 մետր երկարություն և 25—30 մետր լայնություն: Պարիսպների վրա կան երեք աշտարակի հետքեր, որոնցից մեկը (5×5) կառուցված է միջնաբերդի հյուսիս-արևմտյան անկյունում, մյուս երկուսը, նույն շափերով, գտնվում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում: Այդ աշտարակների միջև ընկած պարսպի կենտրոնում երևում է ամրոցի մուտքի բացվածքը: Հյուսիս-արևմտյան աշտարակից մոտ 50 մետր հեռու սկսվում է արտաքին պարիսպը: Այս պարսպին զուգահեռ, հյուսիս արևելյան լանջով 35—40 մետր

հետու, նկատվում է երրորդ պարիսպը, սակայն նա չի շարունակվում մինչև վերջ: Պարիսպների կառուցվածքը նույնն է, ինչ լճաշենի ամրոցի հին շրջանի պարիսպները, միայն այստեղ քարերն ավելի փոքր ու տափակ են:

Ամրոցի ներսում և նրանից դուրս նկատվում են կացարանների ավերակների հետքեր:

Մեծեփը գտնվում է լճաշենից մոտ հինգ կիլոմետր հեռավորության վրա: Այստեղից դեպի շորս կողմ բացվում են գեղատեսիլ հորիզոններ: Լեռան գագաթից երևում է լճի գրեթե ամբողջ հայելին, ափերով հանդերձ, իսկ դեպի արևմուտք՝ Հրազդան դեռի հովիտը, Սևան-Նրևան խճուղիով մինչև Հրազդան քաղաքը:

Այս բոլորը թույլ են տալիս ենթադրելու, որ Մեծեփ անունով լեռան գագաթին եղած կիկլոպյան ամրոցը, հավանորեն, հանդիսացել է լճաշենի ամրոցի հեռավոր մատույցներում մի պահակային կետ:

Լճաշենի ամրոցի մոտ, երկու կիլոմետր դեպի հյուսիս (հանույթ 8), վերջերս բացված լճի հատակում, բազմաթիվ դամբարանների հետ հայտնաբերվեց նաև մի փոքր բնակավայր, որի ընդհանուր տարածությունը քիչ է կես հեկտարից: Այս բնակավայրի ավերակները գտնվում են երկարավուն մի բլրակի վրա, որն իր շրջապատից բարձր է 5—6 մետր: Դիտելով հյուսիսային ծայրամասում պահպանված, կանոնավոր շարքով պարսպի հատվածը (12 մետր), կարելի է ենթադրել, որ այստեղ հնում եղել է ինչ-որ կառույց, որը կապված է եղել լճաշենի ամրոցի հետ, գուցե, որպես մոտակա պահակակետ:

Հնարավոր է նաև, որ այդպիսի պահակային կետ է ծառայել Ցամաքաբերդ գյուղից դեպի հարավ ընկած բարձունքի գագաթին եղած երբեմնի ամրոցը, որը մինչև լճի մակարդակի իջնելը մի թերակղզի էր: Այդտեղից երևում է ինչպես լճաշենի ամրոցը, այնպես էլ Մեծեփի գագաթը: Այս ամրոցը, ինչպես և Սևանա կղզում եղած ամրոցը մեր կարծիքով նույնպես պաշտպանել են լճաշենի մատույցները հանկարծակի անակնկալներից՝ Սևան-Դիլիջան ուղղությամբ:

Մովագյուղի ամրոցը (հանույթ 9): Սևանա լճի ամենահյուսիսային վերջավորության ափին է գտնվում Մովագյուղը: Նրա հյուսիս-արևելյան մասում կա մի ձվաձև բարձունք՝ ծածկված ժամանակակից գերեզմաններով: Այս բարձունքի վրա մի ժամանակ կա՞գնած է եղել կիկլոպյան ամրոց,

որի պարիսպների հիմքերը երևում են բարձունքի գագաթի եզրերով: Դիտելով պարիսպների հիմքերը, կարելի է ենթադրել, որ նրանք ունեցել են 3,5 մետր լայնություն, ինչպիսին է գրեթե բոլոր կիկլոպյան ամրոցներում: Պարսպի քարերը ուշ ժամանակներում օգտագործվել են որպես շիրմաքարեր: Ամրոցի անկյուններում նկատելի են աշտարակների հետքեր: Այս ամրոցը, հավանորեն, հանդիսացել է Սևանի ավազանի ամենահյուսիսային կիկլոպյան ամրոցը:

Աղլի բերդ ամրոցը (հանույթ 10): Լճաշենից 10 կիլոմետր դեպի հարավ հանութագրվեց մի կիկլոպյան ամրոց կամ միջնաբերդ, իր շրջակա բնակատեղիով:

Նշված ամրոցը գտնվում է նորաշեն գյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք, բազալտե անընդմեջ քարերով ծածկված, շրջապատի վրա իշխող երեք, հարավից հյուսիս զուգահեռ ձգվող ժայռապատ բլուրների շուրջ:

Ամրոցն իր շրջապատի նկատմամբ ունի գերիշխող դիրք՝ 60—70 մետր բարձրությամբ: Նրա արևելյան լանջը խիստ քարքարոտ է և թեք: Մյուս լանջերը ավելի քիչ թեքություն ունեն և այդքան բարձր չեն իրենց շրջապատից:

Միջնաբերդի պարիսպների ընդհանուր երկարությունը մոտ 400 մետր է, հյուսիսից հարավ կողմնորոշված ամրոցն ունի 120 մետր երկարություն և 80 մետր լայնություն, զբաղեցնում է շուրջ մեկ հեկտար տարածություն:

Միջնաբերդի մակերեսի բլուրներից աղատ տարածությունները ծածկված են կացարանների ավերակներով: Կացարանների հետքեր են երևում նաև բլուրների խորշերում ու քարանձավներում: Միջնաբերդի պարիսպները, որոնց մեջ պարզորոշ երևվում են հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան մուտքերը, լավ են պահպանվել: Այստեղից դուրս է գալիս մի ուզի, որը գնալով դեպի հյուսիս-արևելք, մտնում է երկու բլուրների միջև ընկած ձորակը ու այդպես շարունակվում մինչև բնակավայրի վերջը: Մյուս մուտքը, որն ավելի նեղ է, հարավային լանջերով իջնում է դեպի հովիտը և կորչում բնակատեղիում:

Պարիսպների վրա լավ երևում են 11 քարաբուրգերի հիմքերը, որոնցից չորսը գտնվում են երկու մուտքերի աջ ու ձախ կողմերում, միմյանց հավասար մեծությամբ (5×5), մեկ աշտարակ նույն մեծությամբ գտնվում է պարսպի հարավ-արևելյան անկյունում, մուտքին անմիջապես կից: Նման մի

այլ աշտարակ էլ գտնվում է հյուսիս-արևմտյան անկյունում, մյուսը կանգնած է հարավային պարսպի վրա՝ մուտքից քսան մետր գեպի արևմուտք։ Մնացած աշտարակները միմյանցից 7—10 մ. հեռավորության վրա են, արևմտյան պարսպի կենտրոնական մասում։ Աշտարակների այսպիսի դասավորությունը պետք է ապահովեր ամրոցի պաշտպանությունը։ Պարիսպներն ունեն հավասար լայնություն (4 մետր), շինարարական տեխնիկան նույնն է, ինչ լճաշենի ամրոցի մինչուրարտական ժամանակաշրջանի կառուցվածքը։ Պարիսպների բարձրությունը տեղ-տեղ պահպանվել է չորս մետր։ Նայելով արևմտյան կողմի պարսպից թափված քարերի ահռելի կուտակումներին, պետք է ենթադրել, որ պարիսպները և աշտարակները եղել են բավականին բարձր։

Միջնաբերդը, ինչպես նաև նրա շրջապատը ջրաղորդ են։

Մեր հավաքած խեցեղենի բեկորները հնարավոր

ություն չեն ընձեռում ամրոցի ժամանակագրությունը պարզելու համար, սակայն նայելով պարիսպների ու աշտարակների կառուցման արվեստին, այն կարելի է թվագրել մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջին շրջանով։

Վերը նկարագրված Աղլի բերդ-ամրոցը հավանորեն մտած եղել է Կիսիսունի տոհմա-ցեղային միության կազմի մեջ և հանդիսացել է լճաշենի ամրոցախմբի ամենահարավային ամրոցը, քանի որ առայժմ այս ամրոցից դեպի հարավ մեղ հայտնի չէ մի այլ ամրոց, որը գտնվելիս լինի ավելի հարավ, մինչև Վելիբուխի երկրի հյուսիսային սահմանին հասնելը, հետևաբար այս ամրոցը սահմանադիսային մի ամրոց է եղել, որը և իր կառուցվածքով, դիրքով ու ամրության մասնապատասխանում է իր նշանակությանը։

Այսպիսով, ավարտվում է Սևանի սլավոնական սահմանների մեջ մտնող Սևանի շրջանի կիկլոպյան ամրոցների համառոտ նկարագրությունը։



## ԿԱՄՈՑԻ (ԳԱՎԱՌ, ՆՈՐ ԲԱՑԱԶԵՏ) ՇՐՋԱՆԻ ԿԻԿԼՈՊԵԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Կամոյի շրջանն ընկած է Սևանա լճի արևմտյան ափերի կենտրոնական մասում, լճաշենից դեպի հարավ, Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերին ու ստորոտներին, գրավելով Գավառագետի ողջ հովիտը և նրա մերձավոր վայրերը ինչպես հարավում, նույնպես և հյուսիսում: Արևելքից սահմանագիծ է հանդիսանում Սևանա լիճը, արևմուտքից՝ Գեղամա լեռների գագաթները (քարտեզ-սխեմա 11):

Գավառագետի հովտի կլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն են տվել տեղի բնակիչներին՝ անհիշելի ժամանակներից զբաղվելու հողի մշակությամբ, անասնապահությամբ, ձկնորսությամբ, իսկ ավելի հնագույն անցյալում՝ որսորդությամբ:

Այժմյան լճաշենից Կամո տանող ճանապարհի վրա հանդիպում ենք բազմաթիվ հնագույն հուշարձանների՝ դամբարանադաշտերի՝ առանձին դամբարանների, բնակավայրերի, կիկլոպյան պարսպի մնացորդների, կիկլոպյան ամրոցների կամ միջնաբերդերի մի մեծ խմբի:

Ամրոցների մի ուշագրավ խումբ գտնվում է Գավառագետի արգավանդ հովտում, որը, համաձայն ուրարտական արձանագրության, Ուելիքուխի կամ Վելիքուխի երկիրն է իր նշանավոր կիկլոպյան ամրոցով՝ այժմյան Կամո քաղաքի կենտրոնում բարձրացող սարահարթի արևմտյան վերջավորության վրա: Սարահարթը բարձրանում է Գավառագետի միջին հոսանքի ձախ ափին և իջխում է ողջ շրջապատի վրա:

Բերդի գլուխ ամրոցը (հանույթ 12): Խալդ աստծո քաղաք-տաճարը տեղացի բնակիչներին հայտնի է «Բերդի գլուխ» անունով: Այն իր արևմտյան անմատչելի, խիստ ժայռապատ վերջավորությամբ խրված է քաղաքի մեջ և նրանից բարձր է 40—50

մետրով: Բարձունքի մակերեսը համարյա հարթ է, բացառությամբ նրա արևմտյան եզրի մոտ գտնվող 5—6 մետր բարձրությամբ բլրակի ս. Ստեփանոս մատուռի շրջակայքում: Բարձունքը, սկսվելով արևմուտքից ավելի նեղ, գնալով դեպի արևելք, աստիճանաբար լայնանում է և շարունակվելով մոտ հինգ կիլոմետր, վերջանում է խիստ ժայռապատ զառիթափով, որտեղ հնում կանգնած է եղել մի այլ կիկլոպյան ամրոց:

Սարահարթի հյուսիսային լանջը ավելի քիչ թեքություն ունի, քան հարավայինը, որն ամբողջովին ծածկված է խոշոր ժայռերով, և լանջը գրեթե անանցանելի է դառնում: Բարձունքի գագաթի մոտ, հարավային լանջում կան մի քանի բնական քարանձավներ, որոնցից երկուսը բավականին մեծ են ու ընդարձակ, հավանորեն հանդիսացել են նախնադարյան կացարաններ: Բարձունքի արևմտյան մակերեսը ծածկված է անընդմեջ ժայռասալերով ու գրեթե զուրկ է հողաշերտերից: Հողածածկ տարածությունն էլ վաղ ժամանակներից ծառայում է որպես գերեզմանոց:

Ամրոցի երկարությունը՝ արևելքից արևմուտք շուրջ 400 մետր է: Այն սկսվում է բարձունքի արևմտյան վերջավորության զառիթափից և վերջանում արևելյան մասում, շորս մետր լայնություն ունեցող պարսպով: Ամրոցի միջին լայնությունը՝ հյուսիսից հարավ 110 մետր է: Այսպիսով, ողջ ամրոցը միջնաբերդի հետ միասին զբաղեցնում է մոտ հինգ հեկտար տարածություն, որից միջնաբերդը մեկ ու կես հեկտար է:

Ամրոցի կենտրոնական և միջնաբերդի հարավ-արևմտյան մասերում նշարվում են կացարանների հետքեր, որոնց պատերի մեկ շարքը երևում է հողի երեսին:

Նման կացարանների հետքեր երևում են նաև

սարահարթի հարավային լանջերում: Այստեղ որպես սլաք օգտագործվել են վերևից գլորված խոշոր ժայռաքեղոնները:

Կամո քաղաքի կենտրոնական մասում, որտեղ հիմա կանգնած է պետական թատրոնի շենքը, եղել է խոշոր դամբարանադաշտ: Այստեղ կատարել ենք հետախուզական պեղումներ, և դամբարանից գուրս եկած իրերը առնչվում են Բերդի գլխի ամրոցի կոմպլեքսների հետ: Հար և նման դամբարաններ բացվել են նաև Բերդի գլխի հարավային լանջերում, իսկ խաչեր կոչված սարահարթի հարավային լանջում հայտնաբերվեց ու պեղվեց մի քարայր, որտեղ կատարվել է խմբային թաղում (գտնվեց չորս կմախք, երկուսը՝ մեծահասակի, երկուսը՝ երեխայի), հայտնաբերված կավանոթները, որոնք դրված էին ննջեցյալների հետ, թվագրվում են մ. թ. ա. 9—8-րդ դարերով:

1927 թվականին Բերդի գլխում հայտնաբերվել է ուրարտական արձանագրություն, որը թողել է ուրարտական թագավոր Ռուսան, Սարգուրի որդին, դա ղգալի պարզություն մտցրեց Վելիթուխի երկրի պատմության հետ կապված հարցերի լուսաբանման մեջ: Արձանագրության գլուտից հետո պարզ դարձավ, որ Գավառագետի հովիտը նախաուրարտական շրջանում կոչվել է Ուելիկուխի-Վելիթուխի երկիր:

Այսպիսով, պարզվում և մեր հետախուզական պեղումներով ապացուցվում է, որ Բերդի գլուխ ամրոցը ունեցել է երկու շինարարական շրջան՝ նախաուրարտական և ուրարտական, իսկ կյանքը հարատևել է մինչև միջին դարերը (աղյուսակ 13):

Ուրարտական ամրոցն արտաքինից երևացել է որպես մի ամբողջություն՝ չորս կողմից շրջապատված ամուր պարիսպներով, պարիսպներին՝ բարձր աշտարակներ: Ամրոցը ներսում միջնապարսպով բաժանված է եղել երկու մասի՝ արևմտյան և արևելյան: Արևմտյան մասը քիչ ավելի բարձրադիր է եղել և ավելի քիչ տարածություն է գրավել: Իր հարավային, արևմտյան և մասամբ հյուսիս-արևմտյան կողմերից այն անառիկ է եղել, որտեղ և գտնվել է միջնաբերդը: Արևելյան ընդարձակ մասը հանդիսացել է պարսպապատված բնակավայրը: Վերջերս մեր նոր հետազոտություններից պարզվեց, որ արևելյան պարսպապատից դուրս, նրան անմիջապես մոտ, գոյություն են ունեցել բնակարաններ:

Ամրոցի մուտքը հնարավոր է, որ տեղադրված լիներ սարահարթի հյուսիսային լանջի կողմից,

այն միջնապարսպի մոտ, որը միջնաբերդը զատում էր ամրոցից: Նշված վայրում դեռևս կան աշտարակի հիմքի քարերը: Բացի դրանից, արձանագրված շինարարական քարը գտնվելիս է եղել սկրզբում՝ ենթադրվող աշտարակի մոտ, որտեղից տեղափոխել ու դրել են գերեզմանի վրա որպես տապանաքար: Քարի երկու երեսներին գրվածը ցույց է տալիս նրա պատի անկյունաքար լինելը:

Բերդի գլուխ ամրոցը իր շրջակայքում ոչ մի աղբյուր կամ առու չի ունեցել, ուստի հասկանալի է, որ ամրոցի ջրամատակարարումը վերին աստիճանի դժվար կլիներ ընդհանրապես, իսկ պատերազմական գործողությունների ժամանակ անհրեժանարին, եթե չլիներ այն արհեստական գետնուղին, որով ամրոցը կապվել է Գավառագետի հետ, որտեղից ջուրը ամրոց է բերվել այդ ճանապարհով: 1964 թ. մեզ հաջողվեց բացել գետնուղու մի փոքրիկ հատված, որը գետափի մուտքից 150—200 մետր հեռու էր: Այդ ստորերկրյա ճանապարհով, որը չորս կողմից սալապատված էր, մարդը կարող էր շարժվել կուզեկուզ: Այդտեղից գտնվեցին 8—10 սմ. տրամագծով լավ թրծած կավի խողովակներ, որոնց նշանակությունը անհասկանալի է: Հետախուզության ընթացքում հայտնաբերվեց նաև դետափ դուրս եկող գետնուղու ելքը (հանույթ 14 և 15): Քարանձավի կենտրոնում, որտեղ վերջանում է գետնուղին, կա մի ջրհոր, որի եզրերը կանոնավոր շարված են 0,5 մետր խորությամբ սրբատաշ քարերով: Այստեղից սկսվում է ստորերկրյա ճանապարհը դեպի Բերդի գլուխ:

Մյուս հարցը, կապված Բերդի գլխի ամրոցի հետ, դա Գավառագետի վրա գտնվող քարե կամուրջների գոյության հարցն է, որը, մեր կարծիքով, կապված է բերդի հետ: Ինչպես վերևում ասվեց, Բերդի գլխի ամրոցը հանդիսացել է կենտրոնական ամրոցը Գավառագետի ավազանում, ուստի, մենք պետք է պարզենք, թե ինչպես է կենտրոնական ամրոցը կապվել Գավառագետի աջափնյա ամրոցների ու բնակատեղիների հետ:

Բերդի գլխի հարավ-արևելյան անկյան ուղղությամբ, Գավառագետի վրա կա սալաքարերից կառուցված մի կամուրջ, որը մնում է առ այսօր և որին տեղացիները «Քարե կամուրջ» են ասում (հանույթ 16):

Կամուրջն ունեցել է վեց կամ ութ թուխք, ծածկված խոշոր սալաքարերով: Վերջինների երկարությունը հասնում է 3,5 մետրի, կան ավելի երկարները, լայնությունը մեկ մետրից ավելի է, հաս-

տությունը՝ 0,4—0,6 մետր: Դրանք զուգբերով դրված են խոշոր ու անտաշ քարերից շարված հենասյունների վրա: Երկու սալաքարերի միացումից ստացվել է 2,5 մետր լայնութուն ունեցող կամուրջ, որի վրայով, մեկ ուղղությամբ, կարող էին շարժվել այն ժամանակվա սայլերն ու մարտակառքերը: Սալաքարերն իրենց մի անկյունում, երբեմն էլ երկու անկյունում, նույն ուղղությամբ, ունեն 5—7 սմ. տրամագծով անցքեր, որոնք ծառայել են փոկերը եղներին կամ զոմեշներին ամրացնելու համար, գուցե և ստրուկներին լծելու՝ վեմերը քարհանքից տեղափոխելիս: Սալաքարերի բոլոր անցքերը դարձված են դեպի հյուսիս, որը ցույց է տալիս, որ նրանք բերվել են գետի հարավային կողմում եղած բարձունքից (աղյուսակ 17):

Գետի հարավային ափի բարձունքի լանջում, մի գոգավոր ձորակում, որն ընկած է ուղիղ կամրջի դիմաց, պարզորոշ կերպով նշմարվում է ճանապարհի հետքը 3—4 մետր լայնությամբ:

Գավառագետի քարե կամուրջը գուցե այն հազվագյուտ կառույցներից է, որոնք եղել են հնում Հայկական լեռնաշխարհում:

Լճափի երեք ամրոցները (հանույթ 18): Լճափ գյուղը նորաշեն գյուղից 10 կիլոմետր դեպի հարավ է: Գյուղի արևելյան ծայրամասից սկսվում են կիկլոպյան տիպի ընդարձակ բնակատեղիների ավերակները, որոնց զգալի մասը ի հայտ են եկել լճի մակարդակի ցածրանալուց հետո: Հին բնակավայրից դեպի արևելք, երեք բլուրների վրա հայտնաբերվեցին ու հանութագրվեցին երեք ամրոցներ կամ միջնաբերդեր, որոնք միմյանցից 300—500 մետր հեռավորության վրա գտնվելով, չեն միանում պարիսպներով, ուստի և այդ երեք ամրոց-միջնաբերդերը համարում ենք առանձին կառույցներ՝ միևնույն ցեղի առանձին տոհմերին պատկանող:

Այսպիսով, Լճափի երեք ամրությունները միասին կազմել են ամրոցների մի կոմպլեքս Վելիբուխի երկրի ամենահյուսիսային ծայրամասում:

Բլուրները, որոնց վրա կառուցված են Լճափի ամրոցները, իրենց շրջապատից բարձր են 25—30 մետր, ունեն խիստ ժայռապատ լանջեր, նրանցից յուրաքանչյուրը իր զագաթում ունի 1—2 հեկտար խորդուբորդ մակերես: Այս ամրոցանիստ բլուրներից երկուսը՝ կենտրոնականը և հյուսիսայինը, մինչև ջրի իջնելը եղել են կղզիներ և միայն հարավային բլուրը իր արևմտյան վերջավորությամբ միացած է եղել մայրցամաքին, կազմելով մի հոր-

վանդան: Հասկանալի է, որ ժամանակին այս երեք ամրոցներն էլ կառուցված են եղել ջրից հեռու, ինչպես նաև նրանց շրջապատի բնակատեղիները:

Լճափի ամրոցների շինարարական տեխնիկան նույնատիպ է և համընկնում է Լճաշենի ամրոցի նախաուրարտական ժամանակաշրջանի շինարարության տեխնիկային, սակայն կան նաև նշանակալից տարբերություններ նրանց միջև: Այստեղ խոշոր քարերը խիստ հարմարեցված են միմյանց աննշան հղկումով: Ամրոցի վտանգավոր ուղղություններում, որտեղ լանջը ավելի դյուրամատչելի է, պարսպի լայնութունը հասնում է 6 մետրի և շարված է 3—4 շարք խոշոր քարերից, ապա մեջը լցված են մանր քարեր ու խիճ: Օրինակ, առաջին ամրոցի մի բնակարանի հատակագիծը, որի երկու պատերը ընդհանուր են ամրոցի պարսպի հետ (աղյուսակ 19):

Ամրոցների պարիսպները տեղ-տեղ պահպանվել են մինչև շորս մետր բարձրությամբ (տես պարսպի կտրվածքը առաջին և երկրորդ ամրոցներից, հանույթ 20):

Ամրոցների ներսում կան բազմաթիվ կացարաններ, որոնք անհամեմատ փոքր տարածություն ունեն՝ 3—4 քառակուսի մետր: Այստեղ հայտնաբերվեցին քարանձավային բնակարաններ, ժայռերի մեջ եղած խորշեր, որոնք նույնպես օգտագործվել են որպես կացարան: Նրանց առջև շարված են կիսաշրջանաձև պատեր, որոնց հիմքերը պահպանվել են, երևում են պարսպի շարվածքը և աշտարակների հիմքերը (աղյուսակ 21):

Ամրոցներում և շրջակա բնակավայրերում ջուր չկա:

Չկարողանալով պեղումներ կատարել վերոհիշյալ վայրերում, հավաքեցինք խեցեղենի վերերկրյա բեկորներ, որոնց միջոցով դժվար է որոշել ամրոցի թվագրությունը: Սակայն ամրոցների կառուցման տեխնիկան ցույց է տալիս, որ կարելի է թվագրել մ. թ. ա. առաջին հազարամյակի առաջին քառորդով: Ավերված գյուղի մոտի ամրոցը Լճափ գյուղից բաժանված է բլուրների մի շղթայով, որն ընկած է արևելքից արևմուտք, իսկ նրանց միջանկյալ տարածությունը մեկ և կես կիլոմետր է:

Աղկալայի կիկլոպյան ամրոցը (հանույթ 22) կանգնած է մի խոշոր ժայռաբլուրի վրա և իշխում է շրջապատին: Նա գրեթե անմատչելի է բոլոր կողմերից, բացի Աղկալա գյուղի արևելյան կողմից,

որը ներկայումս միաձուլվել է ամրոցի ավերակներին հետ:

Ամրոցը յուր տեսքով ու կառուցվածքով նմանվում է Լճափի ամրոցներին: Այն նույնպես շրջապատված է բնակավայրի ավերակների մնացորդներով: Ամրոցի ներսում կան բազմաթիվ կացարաններ, որոնք խիստ նման են Լճափի ամրոցներում եղածներին:

Աղկալայի ամրոցն արևմուտքից արևելք, համարյա իր ամբողջ երկարությամբ, եզերվում է ժայռապատ խրամուղիներով և հարավ-արևմտյան անկյունում միանում մի այլ նման խրամուղու, որը ձգվում է դեպի հյուսիս: Խրամուղիների ընդհանուր երկարությունը հասնում է 275 մետրի: Կան նաև այլ խրամուղիներ, որոնք ձգված են զանազան ուղղություններով: Սրանք հիմնականում բնական մանր կիրճեր են, մարդիկ վերափոխելով, ծառայեցրել են պաշտպանական նպատակների, ինչպես այդ ակնհայտ է Լճաշենի ամրոցում: Նշված խրամուղիներն ունեն մինչև հինգ մետր լայնությամբ բարձր բնական ու արհեստական պատեր:

Ազկալայի ամրոցի դիրքը այնքան հաջող է ու զբրիշխող շրջապատի նկատմամբ, որ միջին դարերում կիկլոպյան ամրոցի փլատակների վրա կառուցվել է մի նոր ամրոց, որի անունով էլ մինչև այժմ այն կոչվում է «Աղկալայ» թուրքերեն (Սպիտակ բերդ), քանի որ ամրոցում կանգուն է մնացել մի բուրգակ, բարձր աշտարակի ավերակ, որը ծեփված է կրաշաղախով: Գյուղի հասակավոր մարդիկ այն անվանում են Իշխանաց ամրոց:

Կիկլոպյան տիպի պարիսպը (հանույթ 23) հայտնաբերվեց (Աղջիկ-տղի գերեզմանից, Աղկալայ գյուղից մեկ կիլոմետր դեպի արևմուտք է գտնվում) Սևան-Կամո ճանապարհի անմիջական ձախ եզրին, 200 մետր դեպի հարավ-արևելք: Պարիսպը հատում է ճանապարհը, որտեղ երկու հակադիր կողմերից՝ հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից միմյանց են մոտենում ժայռապատ ու խիստ քարքարոտ, ոչ շատ բարձր լեռնաբլուրների երկու խմբեր՝ ստեղծել են 200 մետր լայնությամբ լեռնանցք: Լեռնանցքը փակված է եղել կիկլոպյան պարսպով, որի ավերված հիմքերը պարզ և որոշակի երևում են ճանապարհի երկու կողմերից: Պատենքը կառուցվել է կիկլոպյան ամրոցների պարիսպների սկզբունքով, երկշար խոշոր քարերից շարված և նրա մեջ լցված ավելի փոքր քարեր ու խիճ: Պարսպի լայնությունը 2,5 մետր է, իջնում է հյուսիս-արևելյան լեռնախմբի գագաթից, թեք-

վում դեպի հարավ-արևմուտք ու ձգվում մինչև Կամո գնացող խճուղին, ապա շարունակվում դեպի վեր՝ հարավ-արևմտյան լեռնաբլուրների լանջերով մինչև նրանց գագաթները: Պարսպի մեջ, երկու տեղում կան խոշոր քարերի բուրգաձև կոտակումներ, որոնք նման են այդ շրջանում եղած դամբարաններին:

Պարսպից դեպի արևմուտք, բավականին ընդարձակ տարածության վրա երևում են հնադարյան բնակավայրերի մնացորդներ: Բնակավայրը վաղուց ի վեր օգտագործվում է որպես վարելահող, և բնակարանների մնացորդները նկատելի են միայն այնտեղ, որտեղ դեռ չի մտել խոփը:

Մեր կարծիքով, այդ կիկլոպյան պարիսպը և նրա արևմտյան կողմում եղած բնակավայրը եղել են մինչև արտական շրջանում և միմյանցից զատել են երկու ցեղերի կամ ցեղային միությունների (Կիբիսունի երկիրը Ուելիթուսի երկրից—Գ. Մ.):

Հայրիվանի ամրոցը (հանույթ 24) կանգնած է առափնյա ժայռի գլխին, իր դիրքով հիշեցնում է Աղկալայի ամրոցը: Նրանից ներքև, դեպի հարավ ընկած հարթությունը, որ այժմ ազատված է Սևանա լճի ջրերից, ծածկված է եղել պարսպապատված բնակավայրով:

Ամրոցի պարիսպների, ինչպես նաև բնակավայրի կառույցների պատերի կառուցման տեխնիկան համապատասխանում է մինչ այժմ նկարագրած ամրոցների ու բնակատեղիների (Աղկալա, Լճափ) շինարարության տեխնիկային:

Սևանա լճի մակարդակի բարձրացումով այդ հնադարյան բնակավայրն ու նրան շրջապատող դամբարանադաշտի մի մասը մնացել են ջրի տակ և հազարամյակների ընթացքում քայքայվել:

Ամրոցում, ինչպես և Աղկալայում, կան բնական խրամուղիներ, որոնք ամրոցի տերերի ձեռքով հարմարեցվել են իրենց նպատակներին: Այսպես, օրինակ, բարձունքի հարավ-արևմտյան ժայռապատ լանջերում կա բավական երկար ու խոր խրամուղի, որտեղ մարդը պրիմիտիվ գործիքներով կարգի է բերել այդ խրամուղին՝ հարկավոր տեղը լայնացրել է կամ խորացրել, պատեր է շարել, երբ խրամուղին դուրս է եկել ցանկացած ուղղությունից:

Հայրիվանի ամրոցը, ի տարբերություն նախորդի, կարելի է համարել միջնաբերդ, քանի որ բացի այն պարիսպներից, որոնք շրջապատում են բլուրը, ամբողջ բնակավայրը նույնպես եղել է պարսպապատված:

Միջնաբերդը իր ամենաբարձր գագաթում, միջնադարյան մենաստանից մոտ 200 մետր դեպի հյուսիս-արևմուտք ունեցել է մի խոշոր աշտարակ, որի հարթակին կարող է տեղավորվել մի քանի տասնյակ մարդ:

Վանքի պատի մոտից ստորերկրյա մի ճանապարհ իջնում է ցած, լճի ցամաքած մասը, որտեղ տարածված է եղել բնակավայրը (աղյուսակ 25):

Ջրից ազատված վայրում, բնակավայրից ոչ շատ հեռու, պեղվեց մի դամբարան, որը ծածկված էր բոլորաձև միջին մեծության քարերով: Կենտրոնում դրված էր մի քանի քար: 0,75 մետր փորելուց հետո դամբարանի արևմտյան պատի տակ հայտնաբերվեց մարդու գանգ: Բացի գանգից ուրիշ ոչինչ չկար:

Հայրիվանի շրջակայքի դամբարաններից հիշարժան է մեկը, որ գտնվում է գյուղի նոր գերեզմանոցի բարձունքի վրա (նկար 26): Դամբարանը վերելից ծածկված է մեծ քանակությամբ գետաքարերով (սալաքարերով), որից մի քանի տասնյակ տարի է, ինչպես պատմում են տեղացիները, տանում և օգտագործում են: Քարաթումբը շրջապատից բարձր է շուրջ երեք մետր, տրամագիծը՝ 26 մետր, դամբարանի շուրջը երեք մետր լայնությամբ սալահատակված է նույն քարերից:

Ազատ ֆաղաֆը և նրա միջնաբերդը (հանույթ 27): Հայրիվանից դեպի Կամո ճանապարհի երկու կողմերը գրեթե անընդմեջ ծածկված են հնագույն դամբարաններով, իսկ երբ վերը նշված սահմանազատող պարսպից հեռանում ենք 6—7 կիլոմետր, հանդիպում ենք մի ընդարձակ միջնադարյան բնակատեղիի ավերակների, որին Ազատ քաղաք են կոչում: Ավերակների ստորին շերտերը պահպանել են ավելի վաղ շրջանի կուլտուրայի մնացորդներ, իսկ բնակատեղիի ամենաբարձր կետում, մի պայտաձև բլուրի վրա դեռ կանգուն են կիկլոպյան բնույթի միջնաբերդի ավերված պարիսպները ու աշտարակները:

Կիկլոպյան միջնաբերդն իր բարձրությամբ իշխում է քաղաքի ավերակների և շատ հեռավոր տարածությունների վրա: Այն կառուցված է բլրի կոնֆիգուրացիային համապատասխան: Պարիսպների կառուցման տեխնիկան համընկնում է մյուս ամրոցների կառուցման եղանակներին:

Միջնաբերդը գրավում է ընդամենը քառորդ հեկտար տարածություն: Պարիսպների վրա երևում են շորս քարաբուրգերի հետքեր, որոնցից երկուսը գտնվում են միջնաբերդի մուտքի աջ ու ձախ կող-

մերում և նայում են դեպի հյուսիս-արևմուտք, այսինքն դեպի Հայրիվան, որը լավ երևում է այդ բարձունքից: Մյուս երկու աշտարակները գտնվում են միջնաբերդի հարավ-արևելյան պարսպի վրա և նայում են հարավ:

Յոթն աղբյուր բնակատեղին (հանույթ 28): Ազատ քաղաքից դեպի հարավ-արևելք, նորատուս տանող ճանապարհի ձախ կողմի սարահարթում փոված է միջնադարյան լայնանիստ, ավերակ մի հնավայր, որին տեղացիները «Յոթն աղբյուր» անունն են տալիս կամ «Արլու», կամ էլ «Ասլան-Ղափլան»: Վերջին անունը կապված է այդ ավերակներից ոչ հեռու գտնվող քարե մահարձանի գազանակերպ գծագրության հետ, որոնք հիշեցնում են առյուծի ու վագրի պատկերներ:

Այդ բնակատեղին մինչև այժմ դիտվել է, ինչպես Ազատ քաղաքը, իբրև սոսկ միջնադարյան մի ավերակ գյուղ, սակայն հետազոտությունները ցույց տվեցին, որ այս գյուղի տակ գտնվում է հնագույն ամրոց-շեն:

Կիկլոպյան միջնաբերդը գտնվում է սարահարթի հյուսիս-արևմտյան վերջավորության վրա, ունենալով անկանոն 350 մետր երկարություն ունեցող պարիսպ, որը ընդգրկում է 3/4 հեկտար տարածություն:

Միջնաբերդը բոլոր կողմերից շրջապատված է կացարաններով, որտեղ պարզ երևում են ծայրամասերի բնակարանների արտաքին պատերի միացումները, որոնցով ամրոցը բնակավայրը ստացել է մի ուրույն պարսպապատում:

Սարահարթը, որի վրա կառուցված է միջնաբերդը, երեք՝ արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերով դժվարամատչելի է, ունի խիստ թեք լանջեր, որոնք շրջապատից բարձր են 25—30 մետր, իսկ հարավային ու հարավ-արևելյան կողմերով լանջերն աստիճանաբար իջնում են և միաձուլվում դաշտի ընդհանուր մակերևույթին:

Միջնաբերդն ունի մուտք՝ դարձված դեպի հյուսիս, որտեղից ճանապարհը դուրս գալով թեքվում է դեպի արևմուտք և ապա հարավ ու կորչում քնակավայրում: Միջնաբերդն ունեցել է երեք աշտարակ, որոնցից երկուսը գտնվում են պարսպի արևելյան հատվածում, իսկ մեկը՝ արևմտյան: Նրանք ունեցել են 5×5 մետր հարթակ, սակայն նրանց բարձրության մասին դժվար է որևէ բան կռահել:

Միջնաբերդից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, լճի մակարդակն իջնելուց հետո, հարթության վրա երևում են հնագույն կացարանների հետքեր, իսկ

այդ ավերակներից այն կողմ նշմարվում են մի քանի, բավականին խոշոր դամբարաններ:

Այս ամրոց-շենում շրի մատակարարման հարցը, ըստ երևույթին, լուծված է եղել: Զուրը վերցրել են «Յոթն աղբյուրից», որոնք գոյություն ունեին մի քանի տասնյակ տարի առաջ: Այժմ աղբյուրները ցամաք են հավանորեն լճի իջեցման պատճառով:

Ների դարի ամրացը (հանույթ 29): Նորատուս դյուղից երկու կիլոմետր դեպի արևելք, Սևանա լճի (նախկին մակարդակի) ափամերձ հարթության վրա առկա է կոնաձև լանջերով, մեծ թեթևության մի բարձունք: Նրա լանջերը ծածկված են հրաբխային խարամով, որը և խիստ դժվարացնում է բարձունքի գագաթ բարձրանալը: Նա շրջապատի հարթություններից բարձր է մոտ 120 մետր: Տեղացիները լեռը Ների դար են կոչում, որովհետև բարձունքի հարավ-արևելյան լանջում կան երկու բավական ընդարձակ քարայրներ, որոնք, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, հավանորեն եղել են նախնադարյան մարդու կացարաններ:

Լեռան գագաթը ձագարաձև է, և բարձունքի բոլորակ եզրերով անցնում են կիկլոպյան ամրոցի պարիսպների մնացորդները, կրկնելով տեղի շրջանտեղությունը:

Պարսպի ընդհանուր երկարությունը շուրջ 500 մետր է, իսկ ամրոցի բռնած մակերեսը մոտավորապես չորս հեկտար է: Պարիսպներից ներս երեւում են կացարանների ավերակները, որոնց մեջ իր լավ պահպանվածությունը աչքի է ընկնում մի քառանկյունի շենք, որի պատերը մնում են երկու երեք շարք քարի բարձրությամբ: Պատերի լայնությունը 2,5 մետր է, շինության չորս անկյուններում գրված են խոշոր քարեր: Այս շենքն ունի երկու բաժանմունք, երկու սենյակի ձևով:

Ամրոցի պարիսպների կառուցման տեխնիկան նման է մյուս ամրոցների պարիսպների կառուցման տեխնիկային: Ամրոցն ունեցել է յոթ աշտարակ, որոնց հետքերը երևում են պարիսպների վրա: Աշտարակներից երկուսը գտնվում են ամրոցի մուտքի աջ ու ձախ կողմերում, երկուսը՝ ամրոցի հյուսիս-արևելյան պարսպամասում, իսկ երեքը՝ հավասար հեռավորության վրա, մեկը մյուսից՝ 40—45 մետր, ուղղված հարավ-արևմուտք: Աշտարակներն ունեն 6×6 մետր հարթակներ:

Ամրոցի մուտքը եղել է նրա հյուսիս-արևելյան կողմից, այդ մասի լանջը համեմատաբար ավելի բիշ թեթևություն ունի: Մուտքից ճանապարհը դուրս

է գալիս և իջնում դեպի ներքևի հարթության վրա եղած բնակատեղին, այնուհետև աստիճանաբար թեթևում դեպի հյուսիս: Բնակավայրից արևելք փոխված է դամբարանադաշտը:

Ների դարի ամրոցը, հավանորեն, Վելիբուխի երկրի պաշտպանության գործում հատուկ տեղ է գրավել: Կանգնած լինելով բարձր սարի վրա, այս ամրոցը մեծ տեսադաշտ է ունեցել: Այնտեղից պարզ երևում են Գավառագետի հովտի ու նրա շրջապատի համարյա բոլոր կիկլոպյան ամրոցները՝ լճափի ամրոցները հյուսիսում, Կարմիր գյուղի ձմեռանոցի ամրոցը՝ հարավում, Աղի բերդ ամրոցը՝ արևմուտքում և Սևանա լճի ամբողջ հայելին:

Ս. Գեորգ գյուղի կամ Քանագեղի ամրոց-շենը (հանույթ 30): Կամո քաղաքից դեպի հարավ 12 կիլոմետր, Կամո—Մարտունի խճուղուց երկու կիլոմետր արևելք կա մի ավերված միջնադարյան գյուղատեղ, որն այժմ Կարմիր գյուղի կոտնտեսությունը օգտագործում է որպես անասունների ձմեռանոց:

Վայրը, որտեղ գտնվում է նշված միջնադարյան գյուղը, մի ընդարձակ հովանդան է, շուրջ 30 հեկտար տարածությամբ, փոքր անհարթություններով, երեք կողմից շրջապատված Սևանի ջրերով: Այս միջնադարյան գյուղի ավերակների տակ թաքնված են ավելի վաղ շրջանի՝ կիկլոպյան ամրոցի մնացորդներ:

Կիկլոպյան պարսպի հետքերը երևում են ամրոց-շենի հյուսիս-արևմտյան կողմից, այնուհետև դառնում է դեպի արևմուտք և ապա հարավ, 900 մետր ընդհանուր երկարությամբ: Ամրոց շենի մնացած կողմերը պարսպապատված չեն, քանի որ այդ մասերը խիստ քարքարոտ զառիթափ են: Այդ տարածությունում եղած երեք փոքրիկ ձորակներն էլ, որ կարող էին դեպի ամրոց-շենը հեշտ ներխուժման մատուցներ ծառայել, ափից ափ փակված են երեք շարք պարիսպներով:

Պարիսպների արտաքին կողմից նկատելի են յոթ տարբեր ձևի ու մեծության աշտարակների մնացորդներ: Նրանցից չորսը կիսաշրջանի ձև ունեն, հավանորեն ուշ շրջանում վերակառուցված, իսկ երեքը քառակուսի են, նման մյուս կիկլոպյան ամրոցների աշտարակներին:

Ճանապարհը, որը մտնում է ամրոց-շենը, արևմուտքից է և երկու կողմերից պարսպապատված մոտենում է միջնաբերդին:

Միջնաբերդը, համեմատած մյուս միջնաբերդերի և իր իսկ բնակավայրի հետ, շատ փոքր է՝ ավելի

նման է բարձրագույն կետում գետեղված մի առանձին շինություն կամ տան, քան միջնաբերդի:

Քանազեղ ամրոց-շենի հյուսիս-արևմտյան մասում պահպանվել են կիկլոպյան տիպի կացարանների պատեր: Այստեղ հետախուզական մի խումարում պեղումներ կատարեցինք (աղյուսակ 31), որոնք առանձին արդյունքի չհանդեպրին, բացի խցեղենի մանր բեկորներից ու ընտանի կենդանիների ոսկորներից:

Ամրոց-շենի պահակակետը (հանույթ 32), գտնվում է երկու կիլոմետր դեպի հարավ, մի ժայռաբլուրի վրա և իրենից ներկայացնում է մի փոքր ամրոց: Իր մեծությամբ ու տեղադրմամբ սա ոչ այլ ինչ է, քան վերը նկարագրված ամրոց-շենից դուրս բերված մի պահակակետ:

Ամրոցի ներսում չի նկատվում որևէ կացարանի հետք: Հավանորեն այս պահակակետում մշտական ապրող բնակչություն կամ զորախումբ չի եղել: Բնակարանների հետքեր երևում են ամրոցի շուրջը:

Կռոտի խաբաբա բնակավայրը (հանույթ 33) ընկած է Ս. Գևորգ գյուղից (Քանազեղ) 3 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, Կամո-Մարտունի ճանապարհի երկու կողմերում առկա է միջնադարյան մի ավերված գյուղ:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ այստեղ՝ միջնադարյան գյուղի ավերակների տակ նույնպես գտնվում է նախնադարյան ժամանակաշրջանի բնակավայր: Բնակատեղիի եզրագծերի վրա պարզապես երևում են կացարանների արտաքին պատերի հաջորդական միացված շարքերը, որոնցից և ամբողջ շենը դառել է պատնեշապատված, ինչպես այդ տեսանք «Յոթն աղբյուր» ամրոց-շենում:

Գտնված վերերկրյա խցեղենի առանձին բեկորները, որոնք սև փայլեցված ու զարդանկարված են, պատկանում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակի մշակույթին: Այս բնակավայրն էլ, մեր կարծիքով, գոյություն է ունեցել դեռ վաղ բրոնզի դարաշրջանում:

Գիտելով Վելիքուխի երկրի սահմանները, կարելի է ենթադրել, որ Ս. Գևորգ (Քանագյուղ) գյուղը, նրանից երկու կիլոմետր հարավում եղած փոքր ամրոցը իր շրջակա բնակատեղիով և Կռոտի խաբաբա բնակատեղին հանդիսացել են Ուելիկուխի և

<sup>1</sup> Ղումուխ կամ Ղմուխ նշանակում է քարքարոտ վայր, դաշտ:

Թուլիխու երկրների միջև եղած սահմանային բնակավայրերը:

Ղումուխ (Ղմուխ)<sup>1</sup> ամրոցը (հանույթ 34): Արծվաքար գյուղից 8 կիլոմետր դեպի հարավ, Սևանա լճի ափին կան երկու միջնադարյան գյուղերի ավերակներ, որոնց անունները մեզ հայտնի չեն: Այդ գյուղերը բաժանվում են մի երկարաձգված, հյուսիսից հարավ ընկած բարձունքով, որի վրա էլ կիկլոպյան ամրոցի ավերակներն են: Այդ վայրը կոչվում է «Դոլակներ»:

Ամրոցն ըստ վայրի տեղադրության ունի ձվաձև տեսք և զբաղեցնում է շուրջ մեկ ու կես հեկտար տարածություն: Ամրոցի մակերեսը շատ քարքարոտ է, երևում են բազմաթիվ բնակարանների պատերի հիմքեր, որոնց կառուցման տեխնիկան նույնն է, ինչ պարիսպներինը: Ամրոցի պարիսպները ձգվում են բարձունքի հյուսիսից դեպի արևմուտք և ապա հարավ: Զի պարսպապատված ամրոցի արևելյան կողմը, քանի որ այդ մասում բարձունքը ունի խիստ թեք, քարքարոտ ու անմատչելի լանջ:

Ամրոցի պարիսպները, ի տարբերություն այլոց պարիսպների շարին, իրենց դյուրամատչելի մասերում եռաշար են, մեծ ու անտաշ քարերով, որոնց մեջ լցված են ավելի մանր քարեր ու խիճ: Այդպես պարիսպը ավելի ամրակուռ և անխորտակելի է դառնում: Հար ու նման պարիսպների շարվածքի մենք հանդիպեցինք Լճափի առաջին ամրոցի պարսպում, որի լայնությունը հասնում է վեց մետրի:

Ղումուխի ամրոցը ունեցել է յոթ քարաբուրդ՝ 5×5 մետր մեծության, որոնցից երկուսը եղել են մուտքի աջ ու ձախ կողմերում՝ մեկը պարսպի հյուսիսային վերջավորության վրա, մյուսը՝ պարսպի հարավային ծայրում, մնացած երեք աշտարակները հավասար հեռավորության վրա դասավորված են պարսպի արևմտյան հատվածում: Ինչպես վերևում ասվեց, ամրոցի արևմտյան լանջը դյուրամատչելի է, ուստի և պատահական չէ, որ աշտարակները գտնվում են այդ պարսպամասում:

Ամրոցի մուտքը հյուսիս-արևմտյան կողմից է և այդտեղից դուրս եկող ճանապարհը հյուսիս-արևմտյան եզրով պարսպապատված է, ինչպես այլ ամրոցների մուտքերին մոտեցող ճանապարհները:

Ինչպես ամրոցում, այնպես էլ ամրոցից դուրս կան բազմաթիվ դամբարաններ, որոնք իրենց արտաքին տեսքով չեն տարբերվում Լճաշենի շրջա-

կայքի և այլ բոլորաձև ու խոշոր քարերով ծածկը-ված դամբարաններից:

Դամբարանների առկայությունը ամրոցի ներսում ենթադրել է տալիս, որ մինչև ամրոցի կառուցումն այստեղ եղել է մի ընդարձակ դամբարանադաշտ:

Այս ենթագրությունը հիմնավորվում է նաև նրանով, որ հավաքած խեցեղենը մեծամասամբ ունի սև փայլեցրած գույն, ծածկված է զարդանկարներով, որոնք հավանաբար վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի մշակույթ են: Սակայն չի բացառվում նաև, որ այդ դամբարանները կարող են լինել ավելի ուշ ժամանակի:

Պառավի կամ Իլիկյա վանքի ամրոցը (հանույթ 35): Կամո քաղաքից տասը կիլոմետր հարավ, Լանջաղբյուր գյուղի հարավ-արևելյան կողմի բարձունքի վրա մի վանք կա՝ Պառավի կամ Իլիկյա անունով: Վանքի շրջակայքում երևում են կիկլոպյան ամրոցի ու բնակատեղիի հետքեր, որի ամենաբարձրը տեղում մասամբ պահպանվել է միջնաբերդը:

Սարահարթի արևմտյան լանջը թեք է և գագաթի մոտ վերջանում է քսան մետր բարձրություն ունեցող քարային ուղղաձիգ զանգվածով, նրա ստորին մասում որոշակի երևում են քարանձավների մուտքերը: Այդ մուտքերով այժմ կարելի է ներս մտնել միայն սողալով, քանի որ մուտքերը լցված են քար ու հողով: Պարզ երևում են մուտքերի պատերը և նրանց ծածկերը, որոնք մեծ-մեծ սալաքարերով են կառուցված (աղյուսակ 36):

Միջնաբերդը գրավում է բարձունքի առավել հարթ, սակայն գերիշխող մասը: Ի տարբերություն մյուս ամրոցներում եղած միջնաբերդերի, այստեղ բնակարաններ ավելի շատ կան և դրանք կանոնավոր կերպով շարված են հիմնականում արևելյան պարիսպների տակ, օգտագործելով պարիսպը որպես արտաքին պատ:

Միջնաբերդի պարիսպների վրա հայտնաբերվեցին ինը աշտարակ, որոնք դասավորված են միջնաբերդի անկյուններում, մուտքերի մոտ և այն տեղերում, որտեղից ավելի լավ է գիտվում շրջապատը:

Բարձունքը, որի վրա գտնվում է ամրոցը, արևմտյան կողմում բարձր է իր շրջապատից ավելի քան 150 մետր, դեպի արևելք աստիճանաբար իջնում է մինչև հանդիպակաց լեռան ստորոտները, որտեղ կան բազմաթիվ դամբարաններ, հյուսիսից նույնպես իջնում է մինչև Գավառագետի հովիտը, միայն դեպի հարավ: Բարձունքը ձգվում է մի քա-

նի կիլոմետր, մինչև Գեղարքունիք գյուղը: Արևմտյան լանջը գրեթե ուղղահայաց թեքություն ունի: Ամրոցն ավելի անխոցելի դարձնելու համար երեք կողմից պարսպապատված է 3, նույնիսկ տեղ-տեղ երևացող 4 կարգ պարիսպներով:

Միջնաբերդի առաջին՝ հիմնական պարիսպը հինգ մետր լայնություն ունի, մյուսները՝ աստիճանաբար նեղանում են: Քարերը շարված են առանց շաղախի, երկշար, որոնց մեջ լցված է մանր քար ու խիճ: Պարիսպների միջանկյալ տարածությունների վրա նկատելի են բազմաթիվ բնակարանների հետքեր:

Ամրոցն իր շորս պարիսպներով զբաղեցնում է մոտ ութ հեկտար տարածություն, իսկ միջնաբերդը՝ շուրջ մեկ հեկտար: Բացի դրանից, պարիսպներից դուրս կան մեծ քանակությամբ բնակարանների ավերակներ; որոնք անշուշտ կապված են եղել ամրոցի հետ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Պառավի վանքի ամրոցը ունեցել է ջրամատակարարման սխեմա: Նրա հարավ-արևելյան ուղղությամբ, մեկ ու կես կիլոմետր հեռավորության վրա կա երկու ամբարտակ, ուր հավաքվել են հալված ձյան, ինչպես նաև անձրևային ու հեռավոր աղբյուրների ջրերը, ամրոցն ու շենը ջրով ապահովելու նպատակով:

Արտաքին՝ շորորդ պարիսպը, որը շրջանցում է ամրոցը, ունի մուտք աջ ու ձախ կողմերում, միջանկյալ պարիսպների ու միջնաբերդի զխավոր պարսպի վրա կան հզոր աշտարակների հետքեր:

Պառավի վանքի ամրոցից դեպի հարավ ու հարավ-արևելք կիկլոպյան տիպի բնակավայրեր կան, որոնք զբաղեցնում են շուրջ 70 հեկտար տարածություն: Այդտեղ նկատելի են պարիսպների հետքեր, որոնք շրջապատում են կամ ամբողջ բնակատեղին կամ առանձին բնակարանների խմբեր տվյալ բնակավայրի կազմում: Բնակատեղիներն իրենց շրջապատում ունեն գամբարանադաշտեր (հանույթ 37):

Ձորի իսրաբա բնակավայրը (հանույթ 38) գրտնրվում է Լանջաղբյուր գյուղից երկու կիլոմետր դեպի հարավ-արևմուտք: Բնակավայրը տեղադրված է երկճյուղ ձորի շուրջը: Այն հարուստ է վերերկրյա հնագիտական նյութերով՝ օբսիդիանի և կավամանների բազմաթիվ բեկորներով, հաճախակի հանդիպում են նաև քարե գործիքներ, սանդղեր, մակույկաձև աղորիքների ջարդված մասեր և այլն:



լանջադրուր գյուղի շրջակայքում եղել են մի քանի կիկլոպյան բնակավայրեր, որոնք հավանորեն սերտորեն կապված են եղել ինչպես միմյանց, նույնպես և Պառավի վանքի կիկլոպյան ամրոցի հետ, և բոլորը միասին մտել են Ուելիբուխի երկրի կազմի մեջ:

Մաղկավանի ամրոցը (հանույթ 39): Կամո քաղաքից ութ կիլոմետր դեպի հարավ, Սարուխան գյուղի հյուսիսային ծայրամասում սկսվում է մի բարձունք, որը տեղացիները Մաղկավան են անվանում: Այդ բարձունքի հարավային, ամենաբարձրը մասում երևում են կիկլոպյան ամրոցի պարիսպների հետքեր:

Բարձունքը, որի վրա է գտնվում ամրոցը, իր արևմտյան, հարավային և մասամբ էլ արևելյան կողմերի լանջերով խիստ քարքարոտ է ու անմատչելի: Հյուսիսային կողմով այն երկարաձգվում է մի քանի կիլոմետր մինչև Կարմիր գյուղի սահմանները: Այս պատճառով էլ գրականության մեջ այդ ամրոցը վերագրվում է Կարմիր գյուղին:

Ամրոցը կառուցված է բարձունքի առավել քարքարոտ մասում, շրջապատված եռապարսպով, առավելապես այն մասում, որտեղ նրա լանջերը քիչ թեթևացնում են: Գրավում է շուրջ յոթ հեկտար տարածություն, որից մեկ հեկտարը՝ միջնաբերդը:

Միջնաբերդի զխավոր պարիսպը շորս մետր լայնությամբ ունի և երեք աշտարակ: Աշտարակներից մեկը գտնվում է միջնաբերդի հյուսիս-արևմտյան անկյունում, որտեղից դուրս է գալիս մի ոտնուղի և իջնում դեպի Գավառագետի վտակի ափը: Գետակի ափը ծածկված է հնագույն բնակատեղիի ավերակներով: Երկրորդ աշտարակը գտնվում է միջնաբերդի հարավ-արևելյան անկյունում և, ի տարբերություն մյուս աշտարակների, կիսաշրջանաձև է և կառուցված է պարսպի ներսի կողմից: Երրորդ աշտարակը նույնպես տարբերվում է մյուս աշտարակներից. ունի քառակուսի ձև, գտնվում է այսպես կոչված պարսպի վրա, այսինքն մի մասը պարսպից դուրս, իսկ մյուսը՝ ներս: Մեծությամբ այն ամենախոշորն է:

Ամրոցն իր շրջապատով արևելքից, հարավից և արևմուտքից ծածկված է բնակատեղիների հետքերով: Գյուղացիները այդ վայրերում հողային աշխատանքներ կատարելիս հաճախ գտնում են զանազան հնագիտական իրեր, որոնք վերաբերում են ամրոցի գոյության շրջանին: Սարուխան գյուղացի Կոռյան Սիրեկանը գետի ափին քար հանելիս գտել է միջին մեծության մի կարաս, բաց կարմիր

գույնի ներկած, հաստ ու լայն շուրթերով, 0,95 մետր բարձրությամբ և 2,06 մետր շրջանագծով: Նույն տեղում գտնվել է եղջերուի գանգ, որի եղջյուրները հատող սուր գործիքով կտրված են: Գտնվել են նաև զանազան չափերի ու տարբեր նյութերից պատրաստված ուլունքներ: Ամրոցը հարուստ է վերերկրյա բազմաթիվ ու բազմապիսի խեցեղենի ու նյութական արտադրության այլ մնացորդներով:

Ամրոցի պարիսպները խիստ ավերված են (աղյուսակ 40): Նրանց բարձրությունը դժվար է նույնիսկ մոտավորապես որոշել, քանի որ թափված քարեր չկան պարիսպների շուրջը:

Մաղկավանի ամրոցը ջրով հավանաբար ապահովված է եղել, քանի որ ամրոցի երկու՝ արևելյան ու արևմտյան կողմերից ոչ հեռու հոսում են Գավառագետի վտակները, որոնք կարող էին ամրոցին ջուր մատակարարել:

Ուրարտացիները, նվաճելով վելիբուխի երկիրը, ըստ երևույթին, օգտագործել են ինչպես Պառավի վանքի, նույնպես և Մաղկավանի ամրոցները, վերականուցելով այն ըստ իրենց պահանջների, իսկ Մաղկավանի ամրոցի աշտարակների վերականուցումները կասկած են հարուցում, քանի որ այս ամրոցը հարատևել է նաև վաղ հայկական և միջնադարյան շրջաններում: Անհրաժեշտ են հետախուզական պեղումներ. այդ ամրոցում:

Արժվաքար գյուղի մոտի երկու կիկլոպյան ամրոցները տեղադրված են Գավառագետի ստորին հոսանքի աջ-հարավային և ձախ-հյուսիսային ափերին, որոնք Կամո քաղաքից 2—3 կիլոմետր դեպի արևելք են ընկնում:

Փամի դարի ամրոցը (հանույթ 41) գտնվում է Գավառագետի աջափնյա բարձունքին: Կառուցված է բարձր սարահարթի արևելյան գահավեժ եզրին: Զառիթափի հյուսիսային և արևելյան լանջերը խիստ թեք են ու ծածկված խոշոր քարերով: Սարահարթի հարավային և արևմտյան կողմերն ամրոցի շրջակայքում հարթ են: Ամրոցը զբաղեցնում է հեկտարից քիչ ավելի տարածություն, որի մակերեսի զգալի մասը անընդմեջ ծածկված է ժայռերով: Այն բոլոր կողմերից չէ, որ պարսպապատված է: Հարթ կողմերում բարձրացել են հզոր պարիսպներ, որոնց հետքերը կան առ այսօր: Մուտքը գտնվում է ամրոցի հյուսիսային անկյունում, և այնտեղից դուրս եկող ճանապարհը ոլորապտույտ իջնում է դեպի Գավառագետի աջ ափը: Չնայած ճանապարհի բնական թաքնվածությանը ժայռերի մեջ, այ-

նուամենայնիվ նրա բաց տեղերում այն պաշտպանված է խոշոր ու անտաշ քարերից շարված պարսպով:

Ամրոցի սահմաններում երևում են բնակարանների հետքեր: Ամրոցի պարիսպների վրա աշտարակների հետքեր չեն հայտնաբերվել, միայն հարավային պարսպամասի արևմտյան վերջավորութունը ավելի լայնացված է (ութ մետր), որը հավանորեն ծառայել է որպես աշտարակ:

Ջաղացի դարի ամրոցը (հանույթ 42) գտնվում է Գավառագետի հովտի ձախ՝ հյուսիսային բարձունքի վրա, որը Կամո քաղաքի կենտրոնում բարձրացող սարահարթի արևելյան վերջավորությունն է կազմում: Այստեղ պահպանվել են մի կիկլոպյան ամրոցի պարիսպների հետքեր, որոնք նայում են ձորի մյուս կողմում գտնվող ժամի դարի ամրոցին: Այս ամրոցը իր կառուցվածքով միանգամայն նման է վերը նկարագրվածին, այն տարբերությամբ, որ այս վերջինը բացի հիմնական ու գլխավոր պարիսպներից, որտեղ հավանորեն միջնաբերդն է եղել, ունի նաև արտաքին պարիսպ, որը սկսվում է սարահարթի հարավային զառիթափից: Կիսաշրջանաձև անցնելով արևմտյան կողմով դեպի հյուսիս, այն միանում է արևելյան զառիթափի եզրին, իր մեջ առնելով մոտ վեց հեկտար տարածություն, որից մեկ հեկտարը զբաղեցրել է միջնաբերդը: Միջնաբերդը գրավում է ամրոցի առավել գերիշխող ու ավելի լավ պաշտպանված մասը: Այստեղ պարիսպները, ինչպես նաև նախորդ ամրոցում, խիստ քայքայված են, հազիվ պահպանվել են 2—3 ուղղահայաց շարի քարերը (աղյուսակ 43):

Միջնաբերդի պարիսպների վրա հայտնաբերվեց վեց աշտարակ, որոնք դասավորված են ամրոցի անկյուններում ու մուտքերի մոտ: Նրանք հավասար մեծություններ ունեն՝ 5×5, բացառությամբ հարավ-արևմտյան անկյան աշտարակից, որը ավելի մեծ է:

Ամրոց են մտնում երկու ճանապարհ, մեկը՝ գրխավորը, նրա հյուսիսային կողմից, որտեղից հավանորեն շարժվել է նաև անվավոր գումակը, մյուսը, որն ավելի նեղ է, հետիոտնի համար, նման է գաղտնուղու, և ճյուղավորվելով, արևելյան ժայռապատ լանջով իջնում է դեպի Գավառագետը: Այդ ծածկված կածաններով ամրոցի բնակիչները, ըստ երևույթի, իջել են դեպի գետը չոր վերջնելու: Կածանների արտաքին եզրերով անցել է ժայռապարիսպը, ինչպես այդ տեսանք ժամի դարի ամրոցում:

Այստեղ նույնպես պահպանվել են կացարանների պատերի հետքեր: Հողի երեսին կան խեցեղենի մանր բեկորներ, որոնց միջոցով անհնար է որևէ բան որոշել ամրոցի ժամանակագրության մասին: Միայն պարիսպների ու աշտարակների կառուցողական տեխնիկան թելադրում է ենթադրել, որ այս կառուցվածքները վերաբերում են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջին շրջանին կամ առաջին հազարամյակի սկզբին:

Մաքրի ձորի կիկլոպյան ամրոցը (հանույթ 44) գտնվում է ժամի դարի բերդի սարահարթի հարավային զառիթափի գլխին, Մարտունի տանող ճանապարհի ձախ կողմում, Կամո քաղաքից երկու կիլոմետր դեպի հարավ:

Այս հուշարձանը նման է ժամի դարի և Ջաղացի դարի ամրոցներին: Ամրոցի հարավային և արևմտյան կողմերը վերջանում են խիստ ժայռապատ ու մեծ թեթևությամբ, իսկ հյուսիսային և արևելյան կողմերը, լինելով հարթ, պատնեշված են կիկլոպյան պարիսպներով, որոնց վրա հայտնաբերվեցին չորս քարաբուրգերի մնացորդներ: Ամրոցը գրավում է ընդամենը կես հեկտարից քիչ ավելի տարածություն, որի համար գուցե և ճիշտ կլիներ այն համարելնք միջնաբերդ, մանավանդ որ նրա հարավային ու արևմտյան կողմերում երևում են բազմաթիվ բնակարանների հետքեր, որոնք, անշուշտ, կապված են եղել հիշված ամրոցի կամ միջնաբերդի հետ:

Բնակատեղիից դուրս, նրա շրջապատում կան բազմաթիվ դամբարաններ, որոնցից մի քանիսը պեղել է Ս. Լալայանը:

Պարիսպների հիմքի լայնությունը 3,5 մետր է: Աշտարակների հիմքերը վատ են պահպանվել, այսուհանդերձ կարելի է որոշել նրանց մեծությունը՝ 4×4 մետր:

Ամրոցի հարավ-արևմտյան անկյունում երևում է ստորերկրյա մի գետնուղու մուտք, որը ժայռաքարերի միջով անցնում է դեպի դիմացի ձորը և այնտեղից ոչ հեռու գտնվող Գավառագետի վտակը: Գետնուղին ունի մեկ մետր լայնություն, ութ մետր երկարություն, և պահպանվել է մինչ հիմա: Ըստ երևույթի, բնական քարանձավը հարմարեցված է գաղտնի կերպով դեպի ամրոց ել ու մուտ անելու համար: Նույնպիսի գետնուղի մենք տեսանք Հայրիվանի ամրոցում: Նման գաղտնուղի հավանորեն եղել է նաև Ջաղացի դարի ամրոցում, էլ չենք խոսում Կամո քաղաքի Բերդի գլխի ստորերկրյա ճանապարհի մասին:

Հացառատ (Առեեղ) գյուղի մոտի Բերգի գլխի ամրոցը (հանույթ 45) գտնվում է Կամո քաղաքից դեպի արևմուտք, նշված գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասում եղած սարահարթի զառիթափի վրա:

Ամրոցի միջնաբերդը, որը գրավում է գոգավոր տարածություն, դեռ հնուց և մինչև այժմ օգտագործվում է որպես գերեզմանատուն:

Հացառատի հուշարձանն իրենից ներկայացնում է բնակավայրի, ամրոցի ու միջնաբերդի մի ամբողջ կոմպլեքս: Միջնաբերդը, որը գրավել է ժամանակակից գերեզմանոցը, ունի երկարավուն, հյուսիսից հարավ ընկած ձվաձև գծագրություն, որը և համընկնում է վայրի տեղադրության հետ: Նրա բունած տարածությունը մոտ երեք հեկտար է և օղակված է երեք կողմից շորս շարք պարիսպներով: Բացի պարիսպներից, նրանց միջանկյալ տարածություններում եղած բնակարանների պատերի միացումը դարձել է մի լրացուցիչ պատենջ միջնաբերդի համար: Պարիսպները շրջապատում են միջնաբերդն ու ամրոցը հյուսիսից, արևմտքից և հարավից: Արևելյան, հյուսիս-արևելյան կողմերից լանջերը խիստ ժայռապատ են ու մեծ թեքություն ունեն: Ինչպես վերը ասացինք, այստեղ զուգորդված են միջնաբերդը, ամրոցն ու բնակատեղին, և այդ բոլոր վայրերում երևում են կացարանների մնացորդներ:

Միջնաբերդի առաջին պարսպի վրա հայտնաբերվեցին աշտարակներ, որոնք կանգուն են եղել կարևոր ուղղությունների վրա կամ մուտքերի մոտ: Ամրոցի մյուս պարիսպներում նույնպես նկատելի են տասը աշտարակների հիմքեր, որոնք տեղադրված են դարձյալ կարևորագույն կետերում կամ մուտքերի մոտ:

Ամրոցը գրավում է 11 հեկտար տարածություն: Նրա հյուսիս-արևմտյան ու հարավ-արևմտյան անկյուններում գտնվում են գլխավոր մուտքերը, որտեղից և ձգվում են պարսպապատված ճանապարհները դեպի միջնաբերդ: Միջնաբերդ են գնում նաև երկու նեղ կածաններ՝ մեկը հարավ-արևելքից, որն այժմ էլ օգտագործվում է, մյուսը՝ հյուսիս-արևելքից: Միջնաբերդի գրեթե կենտրոնում կա մի գոգավորություն և մի փոսորակ: Տեղացիների ասելով, դա մի հնագույն ջրհորի բերան է, որը հնում բաց է եղել և ուղղահայաց իջել է մինչև սարահարթի արևելյան ստորոտից բխող աղբյուրների ստորերկրյա ակունքները:

Ամրոցից դուրս, դեպի արևմուտք փոխված է մի լայնատարած դամբարանադաշտ: Դամբարանների

մի զգալի մասը պեղել է Ե. Հալայանը: Դամբարաններ կան նաև ամրոցի հեռավոր պարսպի շրջակայքում: Գյուղի հարավային ծայրամասում ընկնող Բատիկյան գյուղի ճանապարհի աջ կողմը նույնպես հարուստ է դամբարաններով, որտեղից հայտնաբերվել են կավամաններ (աղյուսակ 46):

Այդ շրջանում, Գլուր սառնա կոչված վայրում սպիտակ հող քանդելու ժամանակ գտնվել են երեք թռչունների բրոնզյա արձանիկներ բարձր գեղարվեստական կատարմամբ (աղյուսակ 47), նրանց հետ նաև երկու ցից, որոնց ներքին մասը շարդված է, իսկ վերևի երկու ճյուղերը բարձրանում են միաձույլ մի բարձիկի վրա, ապա կորվելով, ճյուղերի ծայրերը խաչվում են և այսպիսով ստացվում է մի օղակ, որի ներսի մի կողմը և նրան հակընդդեմ դրսի կողմը տաշված կամ մաշված են, կարծես երկար ժամանակ քսվել են մի սյլ առարկայի:

Թռչուններից ամենամեծը նման է հոսյուպի, նույնիսկ իր մեծությամբ համապատասխանում է կենդանի հոսյուպի, երկրորդը նման է դեղձանիկի, իսկ կտուցը բազի կտուց է հիշեցնում, մարմնի մեջ զգված են երկու բրոնզյա զնդիկներ, որոնք շարժման ժամանակ ձայներ (զնգոց) են արձակում: Երրորդ թռչնիկը ավելի նման է բազիկի, մեջքին ունի օղակ՝ թել անցկացնելու համար: Սրանք թվագրվում են մ. թ. ա. 12-րդ դարով: Նույն դամբարանադաշտերից տարբեր մարդկանց կողմից գտնվել են բազմաթիվ կավամաններ, որոնց մի մասը, ինչպես նաև վերը նկարագրած թռչունները, գտնվում են Կամո քաղաքի զավառագիտական թանգարանում:

Խաչերի ամրոցը (հանույթ 48): Հացառատի Բերդի գլուխ ամրոցից մեկ և կես կիլոմետր դեպի հյուսիս, Կամո քաղաքի արևմտյան ծայրամասում կա մի հրվանդանաձև ժայռաբլուր, այն դաշտի հյուսիս-արևմտյան մասում, որը տեղացիները Խաչեր են անվանում: Խաչերի այդ բարձունքը հանդիսանում է մի ընդարձակ սարահարթի ժայռապատ վերջավորություն, որի հարավային լանջի ահռելի քարերի տակից բխում են բազմաթիվ աղբյուրներ:

Չնայած բլուրը շատ բարձր չէ իր շրջապատից (15—20 մետր), սակայն խոշոր քարերի կուտակումների շնորհիվ այդ լանջերով գեպի գագաթ բարձրանալը համարյա անհնար է:

Այդ բարձունքի վրա պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդները: Հուշարձանից շատ քիչ բան է մնացել, պարիսպները քանդել են, քարերը տու-

րել, Հաղիվ հայտնաբերվեցին միայն մի պարսպի մնացորդներ և կացարանների պատեր:

Ամրոցն ինքնըստինքյան մեծ չի եղել, հավանաբար նրա վրա դրված է եղել, ինչպես նաև Հացառատի Բերդի գլխի և Մոթբի ձորի ամրոցների վրա, սրահակային ծառայություն կատարելու դեր՝ վելիթրուի և րկրի կենտրոնական ամրոցի նկատմամբ:

Չանդոյի ձորի բնակատեղին (հանույթ 49): Կամոն քաղաքից 5—6 կիլոմետր դեպի արևմուտք, որտեղից սկսվում են Գեղամա լեռների քարքարոտ ու մանր բլուրներով ծածկված ստորին լանջերը, կա մի ձոր, որին Չանդոյի ձոր կամ Գոռներ են կոչում:

Այդ ձորի հյուսիս-արևմտյան բլուրների լանջերում, միմյանցից երբեմն կտրված, տեղանքի խորդուբորդին հարմարեցված, կան բազմաթիվ շինությունների ավերակներ ու միջնադարյան գերեզմանոց, երկու հայկական եկեղեցիների ավերակներ, արհեստական լճի պատնեշ, որի վրա երևում է ջրաղացի տեղը:

Ավերակ բնակավայրը, անշուշտ, վերաբերում է միջին դարերին, սակայն, ինչպես Կարմիրի ձմեռանոցում, այստեղ էլ միջնադարյան փլատակների տակ հայտնաբերվեցին ավելի վաղ ժամանակաշրջանի մշակույթի մնացորդներ:

Բնակատեղին շրջապատված է եղել անտաշ խոշոր քարերով շարված պարսպով: Կացարանների պատերի ստորին շարերը խոշոր ու անտաշ բազալտ քարերից են, նման կիկլոպյան տիպի բնակարանների շարվածքին: Հողի երեսին երևում են օբսիդյանի բազմաթիվ բեկորներ և խեցեղենի մանր փշրանքներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում որոշելու բնակավայրի ժամանակը:

Չանդոյի բերդը գտնվում է վերը նշված ձորից մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, բազմաթիվ ժայռապատ բլուրների մեջ, աչքի ընկնող մի երկարավուն, հարավից դեպի հյուսիս ձգված մի քանի մանր գագաթներով բարձունքի վրա, որտեղ հայտնաբերվեցին կիկլոպյան ամրոցի պարիսպների հետքեր: Ամրոցի շրջապատը ծածկված է բազմաքանակ կառույցների մնացորդներով: Ամրոցից ու բնակավայրից զրեթե ոչինչ չի մնացել, բացառությամբ առանձին կանգնած պարսպի մի փոքր հատվածի, բնակատեղիում մնացած առանձին պատերի: Ամրոցի և բնակատեղիի ավերվածությունն այն աստիճան մեծ է, որ հնարավոր չեղավ որևէ բան հանութագրել:

Յոնջալդի միջնաբերդը և բնակատեղին (հանույթ 50 և 51): Չանդոյի բերդից 1—2 կիլոմետր դեպի հարավ-արևելք ընկած է մի գոգավոր, լայնատարած հարթություն՝ Յոնջալդ անունով (Առվույտի դաշտ): Այդ դաշտն ունի ավելի քան 500 հեկտար մակերես՝ շրջակա բարձրադիր բլրաշարերով, որոնք փարթամ արոտավայրեր են: Դաշտի հյուսիս-արևելյան մասում կա ցածրանիստ բառանկյունի համարյա հարթ գագաթով մի բլուր՝ կես հեկտարից պակաս մակերեսով: Բարձունքի վրա կառուցված է միջնաբերդ՝ շրջապատված անընդմեջ բնակարաններով: Միջնաբերդի ներսում երևում են կացարանների ավերակների հետքեր, իսկ կենտրոնում նկատելի է քառակուսի աշտարակի հիմք: Հավանորեն այս միջնաբերդը ունեցել է երկու, գուցե և երեք շինարարական շրջան:

Քանի որ պաշարված լինելու դեպքում միջնաբերդը չէր կարող իր մեջ տեղավորել բոլոր բնակիչներին իրենց անասուններով ու գույքով, ուստի միջնաբերդի շրջակա բնակավայրը նույնպես այստեղ պատ է եղել: Այդ պատենջապատումն իրականացվել է, ինչպես հաճախ հանդիպել ենք այլ ամրոց-շենքերում, շենի ծայրամասերում տների արտաքին պատերի միացումով, որը իհարկե, այն հզոր պարիսպը լինել չի կարող, ինչ ամրոցի կամ միջնաբերդի պարիսպը:

Միջնաբերդը, ինչպես վերևում ասացինք, ուղղանկյուն քառանկյան տեսք ունի, սկզբնական շրջանում զբաղեցրել է ավելի փոքր տարածություն, սակայն հետագայում, ինչպես պարզ ցույց է տալիս կառուցման տեխնիկան, միջնաբերդը ընդարձակվել է արևելյան կողմից 1/3-ով՝ արհեստական հողաթումբ պատրաստելու միջոցով, որպեսզի նոր ստեղծված բարձրության մակարդակը հավասարվի բնական բլրի բարձրությանը:

Միջնաբերդն իր պարիսպներում ունի ինը աշտարակներ ու որմնահերցեր, որոնք իրենց դուրս բերված ելուստով այնքան լայն են, որ կարող էին որպես աշտարակներ ծառայել: Աշտարակներն ունեն քառանկյունի ձև ու դասավորված են միջնաբերդի բոլոր շորս անկյուններում և դուրս են գալիս երկու հատվող պատերի կողմերը:

Որմնահերցերը հիմնականում կառուցվել են հարավային պարսպի վրա, սակայն պահպանվել է նաև հյուսիսային պարսպում: Որմնահերցի այդօրինակ դասավորությունը հասկանալի է, քանի որ հարավային պարիսպը, դրված լինելով բնական ժայռերի վրա, կարող էր շուտ քանդվել, եթե չլի-

նեին այդ հենապատերը, որ ծառայել են որպես աշտարակներ:

Մուտքը մինչև լրացուցիչ կառուցումը եղել է միջնաբերդի արևելյան պարսպի հյուսիսային անկյուն մոտ: Լրացուցիչ կառուցումից հետո, երբ ընդլայնվում է միջնաբերդը, մուտքը դարձվել է դեպի հյուսիս, նախկին մուտքին կից: Ծանապարհը, դուրս դալով միջնաբերդի մուտքից, աստիճանաբար թեքվում է դեպի արևմուտք և ապա, զնալով դեպի հյուսիս, կորչում բնակավայրի ավերակներում:

Պարիսպն ունի չորս մետր լայնություն, բարձրությունը 3—5 մետր է: Քարերը կիսամշակ և ողորկ կողմերով դարձված են դեպի դուրս: Շարվածքն առանց շաղախի է, քարերը 2—3 խորանարդ մետր մեծություն ունեն, բազալտից են:

Միջնաբերդից 300 մետր հյուսիս-արևմուտք կա մի ամբարտակ, որը կիսաշրջանաձև պատնեշել է կաթսայանման հովիտը հարավ-արևելքից, և ստացվել է մի հսկայական ջրամբար, նման Չանգոյի ձորում կամ Պառավի վանքի շրջակայքում եղած ջրամբարներին: Այս ջրամբարն են հավաքվել բարձունքներում հալվող ձյուններից և անձրևից գոյացած ջրերը, որոնք ամռան ամիսներին օգտագործվել են շենի բնակիչների կողմից: Ջրամբարի հողաթումբն ունի մոտ 350 մետր երկարություն, բարձրությունը՝ ջրհավաքի կողմից մեկ մետր է, իսկ արտաքին կողմից՝ մինչև երկու մետր, հողաթմբի լայնությունը 4—5 մետր է: Հողաթմբի մեջ երևում է քարերով շարվածքը:

Ադի բերդը (հանույթ 52): Վերը նկարագրված բերդից մոտ երեք կիլոմետր դեպի հյուսիս գտնվում է այսպես կոչված Ադի բերդը: Այս ամրոցը կամո քաղաքի շրջակայքում եղած ամրոցներից ամենահեռավորն է և գտնվում է իր շրջապատի բլուրներից ու րլրախմբերից ամենաբարձր, տանձի ձև ունեցող բլրի վրա:

Բարձունքը խիստ քարքարոտ է և ունի ժայռապատ կողեր: Չնայած այդպիսի անհարմարություններին, այնտեղ երևում են բնակարանների ավերված պատերի հիմքեր և պարիսպների մնացորդներ:

Ամրոցի գրեթե բոլոր կողմերում սփռված են բնակավայրերի ավերակներ, որոնք կառուցված են եղել անտաշ, բազալտ խոշոր քարերից, առանց որևէ միացնող շաղախի:

Ամրոցի պարիսպները կառուցված են բլրի եզրերով, վայրի տեղադրությանը համապատասխան: Այն ունի երկու բաժանմունք՝ բլրի դարատափին (терраса) համապատասխան, բաժանված միջնապարսպով: Ամրոցի երկու բաժանմունքն էլ համարյա հավասար են, ունեն մեկ հեկտարից քիչ պակաս տարածություն: Հնարավոր է, որ երկրորդ բաժինը, որը կառուցված է ցածի դարատափի վրա, ավելի ուշ ժամանակվա կառույց է, ինչպես այն տեսանք Յոնջալդի միջնաբերդում: Ամրոցից քիչ հեռու, դեպի հարավ-արևելք, ավելի ցածր դարավանդի վրա, որը ավելի քիչ քարքարոտ է ու հարթ, կա երկարաձգված, բոլորաձև, պատնեշապատ մի հրապարակ, որն ունի մոտ 1000 քառակուսի մետր տարածություն: Նրա ներսում կան մի կիսաշրջան կացարանի պատեր: Այս պարսպապատված վայրը, մեր կարծիքով, եղել է անասունների փարախ՝ անասնապահների կացարանով:

Ամրոցի պարիսպները լավ են պահպանվել, տեղ-տեղ նրանց բարձրությունը հասնում է հինգ և ավելի մետրի (աղյուսակ 53): Պարիսպների վրա երկվում են երեք աշտարակների հետքեր, որոնցից երկուսը դասավորված են հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան անկյուններում, երրորդը՝ հյուսիս-արևմտյան պարսպին կից և զբաղեցնում է պարսպի երկարության 2/3 մասը նրա կենտրոնական մասում: Այս աշտարակը ամենախոշորն է մինչև այժմ մեր տեսածներից: Աշտարակի մեծությունը բացատրվում է նրանով, որ ամրոցի այդ կողմից վտանգը ավելի մեծ է եղել: Տեղանքը գրեթե հարթ է:

Ինչպես ամրոցի, այնպես էլ շրջակա մեծածավալ բնակավայրում աղբյուրներ, առու կամ ջրամբարներ չեն հայտնաբերվել և, հետևաբար, այդ ամրոցի և բնակատեղի ջրամատակարարման հարցը մնում է առեղծվածային:

Սրանով ավարտվում է Կամոյի շրջանի մինչև այժմ մեզ հայտնի Վելիբուխի երկրի սահմանների հետ համընկնող կիկլոպյան ամրոցների և այլ հուշարձանների համառոտակի նկարագրությունը:

Ինչպես տեսնում ենք, Ուելիկուխի երկիրը Սևանի ավազանում գրավել է կենտրոնական տեղ և ինչպես պարզվում է ուրարտական թագավորների կողմից մնացած սեպագիր արձանագրություններից, այս երկիրը քաղաքական, տնտեսական և ռազմական խոշոր դեր է խաղացել Ուրուրի-էտիունի ցեղերի միության կյանքում:

## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Մարտունու շրջանը գրավում է Սևանա լճի հարավ-արևմտյան և հարավային ափերը: Շրջանի տերիտորիայով անցնում է գլխավոր ճանապարհը, մեկ ճյուղով դեպի Բասարգեշար (Վասակաշեն), մյուսով՝ Վայոց ձորի լեռնանցքով դեպի Եղեղնաձոր: Ճանապարհը Կամո քաղաքից դուրս դալով դեպի հարավ, աղատվում է լեռներից ու բլուրներից, կտրում մի շարք գետեր ու գետակներ, որոնք սկիզբ են առնում Գեղամա ու Վարդենիսի լեռներից և անցնելով 15—40 կիլոմետր տարածություն, թափվում Սևանա լիճը: Գետերն իրենց անցած ճանապարհին ոռոգում են դաշտերն ու ջուր մատակարարում շրջակա բնակիչներին:

Գետերի հովիտներում անհիշելի ժամանակներից բնակիչներ են եղել: Այդ են վկայում շրջանում գոյություն ունեցող պատմական հնագույն հուշարձանները, դրանց պեղումներից ստացված նյութերը, որոնք պատկանում են մ. թ. ա. երրորդ հազարամյակին:

Մարտունու շրջանում հայտնաբերվել են 22 կիլոպյան ամրոց, բազմաթիվ դամբարաններ, դամբանաթմբեր, դումեններ և այլ հնագույն հուշարձաններ (քարտեղ-սխեմա 54):

Ամրոցները հետագայում անընդհատ վերակառուցվել են ու հարմարեցվել տվյալ ժամանակի ռազմական պահանջներին:

Դրանք, ըստ իրենց տեղադրման, կարելի է բաժանել չորս հիմնական խմբի՝ առաջին՝ Ադամխան գյուղի շրջակայքում, Մակբար գետի ափերին ու ակունքների մոտ վեց ամրոց, երկրորդ խումբը՝ Ղարանլու գյուղի շրջակայքում, Արգիճա և Դաշտիձոր գետերի, նրանց վտակների ափերին յոթ ամրոց: Այդտեղ է նաև սահմանային կիլոպյան պարիսպը, որը հավանորեն. փակել է Վայոց ձորի լեռնանցքը հարավում ապրող ցեղերից: Այդ պարիսպն անց-

նում է Ղարանլու գյուղի հարավ-արևելյան ծայրամասում եղած ձորափի բարձունքների կատարներով, որտեղով անցնում է մայրուղին դեպի Եղեղնաձոր: Երկարությունը շուրջ վեց կիլոմետր է:

Երրորդ խմբի ամրոցները գտնվում են Մովինալ գյուղից 2 կիլոմետր դեպի արևելք: Դրանք Օձաբերդի, նրա մերձակա երեք ամրոցներն են Վարդենիս գետի ու այլ գետակների շուրջը: Չորրորդ խմբի հինգ ամրոցը գտնվում են Արգիճա հարթավայրի շրջակա բարձունքների վրա, Արգիճա գետի ակունքների մոտ: Այդ ամրոցների մասին այստեղ չի խոսվի:

Քառյի ամրոցը (հանույթ 55): Ադամխան գյուղից երկու կիլոմետր դեպի արևելք կա ոչ բարձր, հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ձգվող մի բարձունք, որին տեղացիները Քոա անունն են տվել քարքարոտ լինելու պատճառով (մինչուրարտացիները այդ ամրոցը հավանորեն թուլիխու է կոչվել):

Ամրոցը գտնվում է բարձունքի գագաթին, բոլոր կողմերից շրջապատված է չորս մետր լայնություն պարիսպով: Երևում են երկրորդ պարսպի հետքերը, որոնք ավելի թույլ են, անցնում են ամրոցի արևելյան մուտքից կիսաշրջանաձև դեպի հյուսիս, ապա, թեքվելով հյուսիս-արևմուտք ու արևմուտք, վերջանում համարյա նույն կետում, որտեղից սկսվում են:

Իրեն շրջապատող բնակատեղիով այն գրավում է ավելի քան վեց հեկտար տարածություն, որից ավելի քան մեկ հեկտարը՝ ամրոցը: Ամրոցն ունի ութ աշտարակ, բոլորը գրեթե հավասար մեծությամբ: Դրանցից չորսը գտնվում են արևելյան և հարավ-արևմտյան մուտքերի աջ ու ձախ կողմերում, երկուսը՝ արևմտյան պարսպի, իսկ մյուս երկուսը՝ հյուսիսային պարսպամասերի վրա: Մի խոշոր

քառանկյունաձև աշտարակի հիմք (13×10,7 մետր) գտնվում է երկրորդ պարսպի վրա, բարձրությունը պահպանվել է 3,7 մետր, հավանաբար սա մի առանձին դիտակետ է եղել:

Ինչպես ամրոցի ներսում, նույնպես և նրանից դուրս երևում են բոլորաձև ու քառանկյունի բնակարանների պատերի հետքեր:

Ուրարտացիները, գրավելով այդ ամրոցը, ըստ երևույթին վերաշինություններ են կատարել այնտեղ և օգտագործել իրենց նպատակներին: Դա նկատվում է ամրոցի հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան պարիսպների կառուցման տեխնիկայից, որոնք ավելի կանոնավոր են շարված, ունեն ուղիղ գիծ:

Ամրոցի շրջակայքում գտնվել է ուրարտական սեպագիր արձանագրություն, որի մեջ հիշատակվում է, թե Ռուսան, Սարգուրի որդին գրավել է Լուբրուխի երկիրը, որտեղից և մենք իմանում ենք այդ տերիտորիայի հնագույն անունը:

Ամրոցը և բնակավայրը հարուստ են վերերկրյա դանաղան հնագույն մշակույթի մնացորդներով, սակայն նրանք այնքան մանրացած են, որ դժվար է նրանց միջոցով որևէ բան ասել ամրոցի անցյալի վերաբերյալ:

Բնակավայրի արևմտյան կողմով հոսում է մի գետակ, որը կարող էր գոյություն ունենալ նաև հին ժամանակ և ջուր մատակարարել բնակիչներին:

Ներքին դեմեր ամրոց-շենը (հանույթ 56): Քառամրոցից ոչ հեռու, դեպի Ադամխան գյուղը կա նույնպես մի բոլորաձև, ոչ շատ բարձր բլուր, որի վրա կան կիկլոպյան տիպի շինարարության մնացորդներ: Գյուղացիներն այդ վայրին ներքին դեմեր անուն են տալիս:

Չնայած որ այստեղ պարիսպների հետքեր չեն երևում, սակայն այս բնակավայրը հիշեցնում է ամրոց-շեներին, որոնց ծայրամասային կացարանների արտաքին պատերի միացումից բնակատեղը պարսպապատվել է (ինչպես՝ Կարմիրի ձմեռանոցում, Յոնջալդի բնակատեղիներում և այլուր): Ներքին դեմեր ամրոց-շենում նույնպես ամրոց-շենի եղրային բնակարանների արտաքին պատերի միացումն ուրույն կերպով պարսպապատել է բնակատեղին:

Ամրոց-շենի ամենաբարձր մասում նկատելի են մի բոլորաձև, 25 մետր տրամագծով կառույցի հետքեր:

Այս ամրոց-շենը, անշուշտ, սերտորեն կապված է եղել Քոայի ամրոցի հետ:

Բնակատեղիի և ամրոցի միջանկյալ տարածության վրա նկատելի են բոլորաձև դամբարաններ:

Թռչնաբուծական ֆերմայի բնակատեղին (հանույթ 57): Երանոս գյուղի թռչնաբուծական ֆերմայի տեղում, որը գտնվում է Կամո-Մարտունի ճանապարհի ձախ կողմում, մի ցածրանիստ, հյուսիսից հարավ ընկած բլուրի վրա գտնվում է ներքին դեմերի բնակավայրի պես մի բնակավայր: Այս բնակատեղիից գրեթե բան չի մնացել, բացի առանձին կացարանների պատերի ավերակներից և պարսպանման քարերի կուտակումներից, որը ենթադրել է տալիս, թե հավանաբար, այստեղ՝ Լուբրուխի երկրի հյուսիսային սահմանագլխում կանգուն է եղել մի ամրոց, որը բաժանել է Վելիքուխի երկիրը նշված երկրից:

Այստեղ նույնպես կան բազմաթիվ օբսիդյան ու խեցեղենի փշրանքներ, որոնք չեն կարող բնակավայրի մասին որևէ տեղեկություն տալ: Բնակատեղին ջրով ապահովված է եղել:

Նեղ բողազի բերդը (հանույթ 58) կառուցված է մի նեղ ձորի հյուսիսային ափին, ժայռոտ բարձունքի վրա, որն իր դիրքով իշխում է շրջապատին: Ամրոցը, կանգնած լինելով հրվանդանի վերջավորության վրա, որի լանջերը երեք կողմից ունեն խիստ թեքություն և ծածկված են խոշոր ժայռաքարերով, շրջապատից բարձր է 150 մետր, միայն հրվանդանի հյուսիսային և մասամբ էլ հյուսիս-արևմտյան կողմերն են, որոնց լանջերը շատ քիչ թեքություն ունեն:

Ամրոցը վայրի տեղադրության համապատասխան ունի ոչ ուղիղ, երկարավուն տեսք: Այն գրավում է մեկ հեկտարից ավելի տարածություն: Պարիսպները կիկլոպյան տիպի են, անտաշ քարերը շարված են առանց որևէ միացնող շղախի, երկշար մեծ-մեծ քարերի արանքը լցված չէ մանր քարերով ու խճով, նրանք մոտեցված են միմյանց, որը հիշեցնում է Լճաշենի ամրոցի շինարարության ավելի վաղ շրջանի կառուցման տեխնիկան: Պարիսպների լայնությունը երեք մետր է: Պարիսպների ու աշտարակների բարձրությունը պահպանվել է 2—3 քարերի ուղղահայաց շարքով, 3—4 մետր բարձրությամբ:

Ինչպես ամրոցի ներսում, այնպես էլ նրանից դուրս կան կացարանների ավերակներ, որտեղ ժայռերը օգտագործված են որպես բնակարանի պատ:

Ամրոցի պարիսպներում հայտնաբերվեցին ինը քարաբուրգի հիմքեր, որոնք ունեն հավասար մե-

ծուխյուն (8/4 մետր) և դասավորված են՝ երկուսը մուտքի, որը եղել է ամրոցի արևմտյան կողմում, աչ և ձախ կողմերում, շորսը՝ հյուսիսային և հյուսիս-արևելյան պարսպամասերում, հավասար հեռավորության (15 մ.) վրա, իսկ մնացած երեք աշտարակները դտնվում են ամրոցի հարավային պարսպի վրա:

Չնայած ամրոցի ներսում չեն նկատվում լայն միջնապարսպի հետքեր, որը նրան բաժաներ երկու մասի, սակայն մուտքի հարավային կողմից միաշար և ամբողջական մի պատի հետքեր ամրոցը բաժանում են երկու անհավասար մասերի՝ հյուսիսային, որը հավանորեն միջնաբերդի դեր է խաղացել և հարավային:

Միջնաբերդի որոշակի չիհնելը, պարիսպների կառուցման նախնական տեխնիկան ենթադրել են տալիս, որ նեղ բողազի ամրոցը կարող է կառուցված լինել մ. թ. ա. երրորդ հազարամյակում:

Ամրոցից դուրս, դեպի հյուսիս-արևելք, 100—150 մետր հեռավորության վրա գտնվող աղբյուրի շուրջը կան մի քանի քարանձավներ, որոնց մուտքերի առաջ երևում են խոշոր քարերով շարված կիսաշրջանաձև պատերի հիմքերը: Այդ քարանձավները որպես մարդկային կացարաններ են ծառայել:

Իերդի դոշի ամրոցը (հանույթ 59) գտնվում է Աղամխան գյուղից 3 կիլոմետր դեպի արևմուտք՝ նեղ բողազ ամրոցի գծի վրա: Ամրոցը գտնվում է թամբաձև բարձունքի վրա, այն համարյա ուղիղ շրջանաձև է: Կառուցված լինելով քիչ թեթևություն ունեցող և ոչ քարքարոտ լանջի վրա, ամրոցը գրեթե բոլոր կողմերից հեշտ խոցելի է, բացառությամբ նրա արևելյան կողմից, որտեղ լանջը փոքր ի շատե թեթևություն ունի: Ամրոցի պարիսպները 250 մետր երկարություն ունեն, մակերեսը մեկ հեկտարից քիչ ավելի տարածություն է բռնում:

Պարիսպներից դուրս 350—500 մետր հեռավորության վրա երևում է ավելի թույլ մի պատ, որը օղակել է ամրոցը բոլոր կողմերից: Պարսպի և այդ երկրորդ պատնեշի միջև ընկած տարածությունը, ինչպես նաև նրանից դուրս ու ամրոցի ներսի մակերեսը ամբողջովին ծածկված են բնակարանների ավերակներով:

Պարիսպներն ունեն շորս մետր լայնություն՝ կառուցված երկու շարք բազալտ քարերից, շարերի արանքը լցված է մանր քար ու խիճ, սրանով էլ ամրոցը տարբերվում է նախորդ ամրոցից: Պարիսպների հիմքերը լավ են պահպանվել, և տեղ-

տեղ նրանց բարձրությունը հասնում է 2—3 մետրի:

Ամրոցն ունի հավասարամեծ վեց քառակույնի աշտարակ (7×4,3 մետր), որոնցից երկուսը գտնվում են հարավ-արևելյան կողմում եղած մուտքի երկու կողմերում, երեքը՝ միմյանցից հավասար (30 մետր) հեռավորությամբ: Զետեղված են ամրոցի արևմտյան պարսպահատվածի վրա, մեկ աշտարակն էլ արևելյան կողմում է:

Ամրոցն ինքնուրույն և ռազմական մի ամրություն լինել չէր կարող իր դիրքով, մեծությամբ և ամրությամբ: Հավանորեն այն եղել է միջտոհմային կամ միջցեղային պաշտպանության մի պատվար և, մեր կարծիքով, ավելի շուտ տնտեսական դեր է խաղացել տվյալ երկրի համար (անասնապահության գործում):

Ամրոցի ներսում և նրա շրջապատում եղած բնակարաններում, հողի երեսին կան օբսիդիանի փշրանքներ և խեցեղենի մանր բեկորներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում որոշելու ամրոցի ժամանակագրությունը:

Ամրոցը ջրով հավանաբար ապահովված պետք է լիներ, քանի որ նրա կողքերով հոսում են լեռնային գետակներ:

Սանգար՝ ամրոցը (հանույթ 60) գտնվում է Ձորագյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք, որը ամենախոշոր ու հզոր ամրոցն է Սևանի ավազանում: Այն կառուցված է խորր կիրճի հյուսիսային, համարյա ուղղաձիգ ու ժայռապատ լանջերով սարահարթի վրա, որը մի ընդարձակ հրվանդանի ձևով մտնում է երեք կողմից գահավեժ ձորերի մեջ: Սարահարթը փոքր ի շատե մատչելի է իր հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերից:

Սարահարթը, որի վրա գտնվում են ամրոցի ավերակները, շրջապատի ձորերի հատակից բարձր է 300—500 մետր: Այդ բարձունքից երևում են գեղատեսիլ Սևանը և նրան պարփակող լեռները:

Սանգարը պարսպապատված է հրվանդանի եզրերով անցնող գծով: Նրա պերիմետրը հավասար է 650 մետրի: Երկարությունը 250 մետր է, միջին լայնությունը՝ 160 մ., շուրջ 40000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

Ամրոցն ունի միջնապարիսպ, որը նրան բաժանել է երկու ոչ հավասար մասի, որից փոքրը՝ ձորաբերանի մասը, հանդիսացել է միջնաբերդը: Գրավում է մոտ 17000 քառակուսի մետր: Ամրոցի ներսում կան բազմաթիվ բնակարանների ավերակ-

<sup>1</sup> Սանգար—ժայռապատ, ապառաժ քարերով պատած վայր:



ների հետքեր՝ առավելապես միջնաբերդում: Կացարանների հետքեր երևում են նաև նրա պարիսպներից դուրս, հարավ-արևմտյան կողմում:

Միաշար պարսպի կրկնակի հետքեր կան ամրոցի հյուսիսային կողմում, որոնք մերթ հեռանալով գլխավոր պարսպից և մերթ մոտենալով, նրա արևմտյան կողմով գալիս, միանում են հարավ-արևմտյան աշտարակի հիմքին: Ամրոցից դեպի հյուսիս կան բոլորաձև դամբարաններ:

Ամրոցի արտաքին պարիսպների վրա երևում են տարբեր մեծության աշտարակներ, միջնապարսպի վրա կան ավելի փոքրերը, որոնք դարձված են դեպի ամրոցի գլխավոր մուտքը: Աշտարակները միմյանցից համարյա հավասար հեռավորության վրա են դասավորված՝ առաջին աշտարակը (6×12 մետր) գտնվում է ամրոցի հարավ-արևմտյան անկյունում, այնուհետև, մեկը մյուսից 25—30 մետր հեռավորությամբ դասավորված են երեք (7,5×6 մետր) աշտարակ, երկրորդ խոշոր աշտարակը կանգնած է միջնապարսպի և արտաքին պարսպի միացման հանգույցում, որը և արտաքին պարսպի կենտրոնն է, հաջորդ աշտարակը միջին մեծությամբ գտնվում է նշված աշտարակի և մուտքի միջև: Մուտքի երկու կողմերում միջին մեծության աշտարակների ավերակներն են: Մուտքից դեպի հյուսիս-արևելք, մինչև հյուսիսային անկյունի խոշոր աշտարակը, կան միջին մեծության երկու աշտարակ, որոնք միմյանցից 25—30 մետր հեռավորություն ունեն: Միջին մեծության այլ աշտարակի մնացորդներ երևում են միջնապարսպի հարավ-արևելյան վերջավորության վրա, խորն անդունդի գլխին: Չորս փոքր (4,5×2 մետր) աշտարակներ կան միջնապարսպի վրա, որոնցից մեկը գտնվում է մուտքի հարավ-արևելյան կողմի վրա, երկուսը՝ նույն կողմի պարսպի հատվածում:

Այսպիսով, տեսնում ենք, որ Սանգար ամրոցը ունեցել է 16 աշտարակ, որոնք հիմնականում դարձված են դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք, այսինքն, այն ուղղությամբ, որտեղից ամրոցին մոտենալը ավելի դժուրին է եղել: Աշտարակները, հզոր պարիսպները համարյա անհնարին են դարձնում ամրոցի գրոհումը:

Սանգար ամրոցի պարիսպների կառուցվածքը խիստ տարբերվում է մեզ ծանոթ կիկլոպյան ամրոցների պարիսպների հիմնական տիպի կառուցվածքներից: Այստեղ արտաքին պարիսպը ամենուրեք ունի 5—6 մետր լայնություն, շարված խոշոր բազալտ քարի ժայռաբեկորներից, առանց միաց-

նող շաղախի: Պարիսպը շարվել է ոչ թե երկշար, այլ եռաշար խոշոր քարերից և ապա այդ շարքերի միջև եղած ազատ տարածությունները լցվել են փոքր քարով ու խճով: Նույնանման շարվածքի մենք հանդիպեցինք Լճափի, Ղումլուխի և այլ ամրոցներում:

Այդ կարգի կառուցվածքը պարիսպն ավելի ամուր է դարձնում: Պարսպի և աշտարակների բարձրությունը Սանգարի ամրոցում, հավանորեն, շատ բարձր է եղել: Դա երևում է պարիսպներից ու աշտարակներից թափված ահեղի քանակությամբ քարերից: Չնայած այդպիսի ավերածությանը, պարսպի որոշ հատվածներում բարձրությունը պահպանվել է 5—6 մ. (աղյուսակ Ա): Եվ եթե դեկավարվենք (պայմանական) այն նորմայով, որ պարսպի լայնությունը հարաբերվում է նրա բարձրությանը 1:3 հաշվով, ապա կստացվի, որ Սանգարի պարսպի բարձրությունը եղել է շուրջ 15 մետր:

Միջնապարիսպը, համեմատած արտաքին պարսպի հետ, ավելի նեղ է (3 մետր) և շարված է սովորական ձևով: Դիտելով միջնապարսպի առաջ թափված քարերի կուտակումները և համեմատելով դրանք արտաքին պարսպից թափված քարերի քանակի հետ, ենթադրում ենք, որ միջնապարիսպը ավելի ցածր պետք է եղած լիներ:

Ամրոցի մուտքը գտնվում է նրա հյուսիս-արևմտյան պարսպամասում, լայնությունը 5 մետր է:

Սանգար ամրոցի հարավային մասը, ինչպես վերևում ասվեց, վերջանում է ժայռապատ ու դահավեժ լանջերով՝ խորը ձորի մեջ: Այդ անդունդի եզրից քիչ հեռու, ցածրում կան բազմաթիվ մեծ ու փոքր բնական քարանձավներ, որոնք հավանաբար ծառացել են որպես կացարաններ: Դա երևում է այն բանից, որ քարանձավների առջև կան հարթված փոքրիկ հրապարակներ, որոնց արտաքին եզրով կիսաշրջանաձև շարված է քարանձավի մուտքը: Քարանձավներում հայտնաբերվեցին (առանց պեղման) բազմաթիվ կավամանների բեկորներ, օբսիդյան քարի կտորներ և ընտանի կենդանիների ոսկորներ, իսկ տեղացի հովիվները պատմում էին, որ տարիներ առաջ քարանձավներում գտնվել են նաև դամբարաններ՝ մարդկային կմախքներով:

Քարանձավներից երկուսը, որոնք ամենամեծերն են (40—60 բառ. մետր), ունեցել են նաև ստորերկրյա ելք դեպի ամրոցը, որոնցից մեկը պահպանվում է առ այսօր:

Ամրոցի շրջակայքում ոչ մի աղբյուր չկա, ջուր

բերելու համար պետք է իջնեին ձորը: Չնայած այդ գառիթափով բարձրանալու դժվարությունը, այն էլ ջրի ամաններով բեռնված, այնուամենայնիվ, դա հնարավոր է, երբ ամրոցին անմիջական վտանգ չի սպառնում, իսկ պաշարման ժամանակ անհնարին էր, ուստի, կարծում ենք, որ այդպիսի ժամանակ օգտագործվել է ամրոցից քարանձավ տանող ճանապարհը և այդտեղից ծածկաբար, գիշերով իջել են ձոր ու ջուր վերցրել կամ նախօրոք ամրոցում կուտակել են ջրի խոշոր պաշարներ:

Մարտունու շրջանի կիկլոպյան ամրոցների երկրորդ խումբը գտնվում է Ղարանլու գյուղի միջով անցնող ձորի շրջակայքում: Այդ ձորով անցնում է միակ ճանապարհը դեպի Վայոց ձոր-լեռնանցքը:

Դաշտաձորի ամրոցը (հանույթ 62): Դարանլու գյուղից 4 կմ. դեպի հարավ-արևելք կա ավերակ միջնադարյան մի գյուղ, որի անունը մեղ հայտնի չէ: Այն բռնում է Դաշտիձոր գետի երկու ափերը: Ավերակ գյուղի դիմաց՝ Դաշտիձոր և Մարտունի գետերի միացման տեղում մի բարձունք կա, որի կատարին, դետի հունից շուրջ 150 մետր բարձրության վրա, կառուցված է մի հսկա կիկլոպյան ամրոց՝ Դաշտաձորի բերդ անունով կամ պարզապես՝ Բերդի գլուխ:

Այս ամրոցը շատ բաներով նման է Սանգար ամրոցին: Կառուցված է ոչ շատ թեք լանջի վրա և գրավում է ավելի քան երկու հեկտար տարածություն, որից միջնաբերդը՝ մոտ կես հեկտար: Ամրոցի դիրքը գերիշխող է, արևմուտքից՝ անառիկ և շնայած դրան, բոլոր կողմերից նա շրջապատված է շորս մետր լայնություն ունեցող պարիսպներով, որոնց հիմքերը տեղ-տեղ մի քանի շարք քարերի բարձրությամբ պահպանվել են: Բացի հիմնական պարսպից, միջնաբերդը հարավում ունի կիսաշրջանաձև կրկնապարիսպ: Ամրոցի հյուսիս-արևմտյան անկյունից, որտեղ հավանորեն եղել է գլխավոր մուտքը, անցնում է մի երկրորդ ավելի թույլ պարիսպ, որը բարձունքի հյուսիսային ստորին լանջով ձգվում է դեպի արևելք, ապա դառնում հարավ ու վերջանում միջնաբերդի մուտքի մոտ: Այդ պատնեշի ներսի կողմով անցնում է ճանապարհը և ծածկված կերպով հասնում մինչև միջնաբերդի մուտքը:

Պարիսպների վրա հայտնաբերվեցին տարբեր մեծության 14 քարաորդ, որոնք դասավորված են միմյանցից հավասար հեռավորության վրա, միջնաբերդի հարավային պարսպի մուտքի աջ և ձախ կողմերում: Չորս աշտարակ միմյանցից 80—90

մետր հեռավորության գտնվում են հյուսիսային և արևելյան պարսպի վրա: Մեկ աշտարակ՝ գտնվում է ամրոցի մուտքի ձախակողմյան պարսպի վերջավորության վրա: Մի խոշոր՝ (13×10 մետր) քարաբուրգի հիմք գտնվում է ամրոցի պարսպի հյուսիս-արևմտյան անկյունում, որտեղից պարիսպը լեռան շրջածան կատարով, մոտ 110 մետր երկարությամբ, իջնում է մինչև ամրոցի ընդհանուր մուտքը, որի աջ ու ձախ կողմերում երևում են երկու հսկա (13×10 մետր) աշտարակների հիմքեր:

Ամրոցի մուտքը՝ 12 մետր լայնությամբ գտնվում է նրա հարավ-արևմտյան անկյունում:

Աշտարակների այսպիսի դասավորությունը միանգամայն ապահովում է ամրոցի առավել խոցելի կողմերի պաշտպանությունը:

Ամրոցն ու նրա շրջապատը հարուստ են բնակատեղիների հետքերով, նրանցից դուրս կան բուրածև դամբարաններ:

Ամրոցը հավանաբար ապահովված է եղել Վարդենիսի լեռներից հոսող գետակների ջրերով:

Հերի բերդը (հանույթ 63): Դաշտաձորի գետի հյուսիսային ափի բարձունքի լանջում կա մի կիկլոպյան ամրոց, որը կառուցված է վերը նկարագրված ամրոցի դիմաց: Այս ամրոցը տեղացիները Հերի բերդ են անվանում, քանի որ նրա խիստ ժայռապատ ու թեք հարավային լանջում կան քարանձավներ: Սա շնայած դիմացի ամրոցից փոքր է և թույլ իր հզորությամբ, սակայն հավանաբար խոշոր դեր է խաղացել Սևանի ավազանի ցեղային միության (Ուդուրի-էտիունի) պաշտպանության գործում: Մի կողմից՝ նա դիմացի Դաշտաձոր ամրոցի հետ փակել է Դաշտիձորի մուտքը արևելքից և նրան հարող այլ ձորերի մուտքը, մյուս կողմից՝ Հերի բերդի մեկ պարիսպը միաձուլվում է Դաշտիձորի բարձունքների հյուսիսային կատարներով անցնող սահմանապահ պարսպին, որն անցնում է ու հասնում մինչև Ղարանլուի մոտի Ջոջ կող ամրոցին:

Հերի ամրոցը գրավում է մոտ 1600 քառ. մետր տարածություն, շնայած նրա հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերում երևում են շուրջ 13 հեկտար տարածություն՝ թույլ պարսպով պատված բարձունքի գոգավոր լանջում:

Ամրոցի մուտքը հարավ-արևելքից է, երկու կողմերում ունի երկու աշտարակ: Մեկ մուտք էլ երկվում է ընդհանուր պարսպի արևելյան մասում՝ իր կողմերում ունենալով դարձյալ աշտարակներ: Ինչպես վերը ասացինք, այս ամրոցից սկիզբ է առնում

մի սահմանապահ պարիսոյ, որի՝ երկարութիւնը հասնում է հինգ կիլոմետրի: Պարսպի վրա նկատելի են աշտարակների և որմնահերցերի հետքեր, որոնք դարձված են դեպի հարավ ու հարավ արեւմուտք՝ ստեղծելով մի հզոր պաշտպանական կոպառ, մի խումբ ամրոցների հետ:

Ջոջ կողի ամրացը (հանույթ 64) գտնվում է համանուն բարձունքի հարավ-արեւելյան լանջին, որի հարավ-արեւելյան պարիսպը եղել է ընդհանուր՝ նշված սահմանապահ պարսպի հետ միասին: Ամրոցն իր դիրքով իշխում է շրջապատի վրա: Բռնում է մոտ երկու հեկտար տարածութիւն, որից միջնաբերդը՝ 1/4 հեկտար: Պարիսպների և աշտարակների կառուցումը հիշեցնում է Դաշտաձորի ամրոցի կառուցման տեխնիկան: Ամրոցը երկարաձգված պայտի ձև ունի, որի առավել բարձր մասը կիսաշրջանաձև գրավում է միջնաբերդը, իր արեւելյան պարսպում ունենալով տարբեր մեծութիւն հինգ քարաբուրգ, որոնք միմյանցից համարյա հավասար հեռավորութիւն վրա են (20—25 մետր) դասավորված: Մի աշտարակ կանգնած է ընդհանուր պարսպի և ամրոցի հյուսիսային պարսպի անկյունում: Ամրոցի մուտքը եղել է հյուսիս-արեւելյան անկյունում, իսկ միջնաբերդինը՝ հարավային մասում: Ամրոցը, միջնաբերդը և նրանց շրջապատը ծածկված են կացարանների մնացորդներով:

Ամրոցից դուրս երևում են բոլորաձև դամբարաններ:

Այստեղ հետաքրքիր է լուծված ամրոցը ջրով մատակարարելու հարցը: Մոտակայքում ջուր չկա, այն գտնվում է Ջոջ կող բարձրութիւն արեւմտյան ստորոտում և որպէսզի ամրոցի բնակիչները բոլոր դեպքերում կարողանային ջուր վերցնել գետից, նրանք սահմանապահ պարիսպը շարունակել են Ջոջ կող բարձունքի հյուսիս-արեւմտյան լանջով և իջել մինչև գետը: Այսպիսով, պարսպի ետևում թաքնվելով՝ նրանք անվտանգ կերպով կարող էին ջուր վերցնել գետից:

Ալքերդ ամրացը (հանույթ 65) կառուցված է Ջոջ կող ամրոցի դիմաց, ձորի մյուս ափում գտնվող բարձունքի վրա: Նա իր դիրքով ավելի ցածր է, քան Ջոջ կողի ամրոցը, այնուամենայնիվ, իշխում է լեռնանցքի վրա:

Ալքերդ ամրոցը դարերի ընթացքում բազմիցս վերակառուցվել և գոյութիւն է ունեցել մինչև մեր թվականութիւն: 9-րդ դարը և, հիրավի, Ալքերդ ամրոցի շրջանում մենք տեսնում ենք կիկլոպյան ժամանակաշրջանի մնացուկներ, իսկ նրա

կողքին՝ մաքուր տաշված քարերով շարված աշտարակներ: Մեր մատենագրութիւն մեջ հիշատակութիւն կա Ալքերդի մասին: Ասողիկը Քեոփիլոս կայսեր (899 թ.) մասին պատմելիս գրում է. «Սա ի խաղալն իւրում յարեւելս կոյս ի սահմանս Հայոց՝ առնու զՄուս բերդն հայոց, զԱսաղին և զՄեծկերտ և զԱլքերդ ի գավառին Գեղամայ»:

Ամրոցը բռնում է մոտ մեկ հեկտար տարածութիւն, նրա երկարութիւնը կազմում է շուրջ 150 մետր, իսկ միջին լայնութիւնը՝ 65 մետր: Պարիսպները անցնում են բարձունքի եզրերով: Ամրոցը ունեցել է երեք շարք պարիսպներ, որոնց հեռավորութիւնը միմյանցից 15—20 մետր է: Վերջին՝ գլխավոր պարսպի շորս անկյուններում երևում են աշտարակների հիմքեր, որոնցից հարավ-արեւմուտյանը մենք մասամբ պեղեցինք: Աշտարակների քարերը տաշված են, առավել ողորկ կողմերը դարձված են դեպի դուրս: Շարվածքի տեխնիկան հիշեցնում է Լճաշենի ամրոցի առաջին միջնաբերդի հյուսիսային մուտքի աշտարակը: Աշտարակի ճակատը ունի 6,8 մետր երկարութիւն և 3,65 մետր լայնութիւն: Աշտարակի պեղման ժամանակ հայտնաբերվել են խեցեղենի բազմաթիվ բեկորներ, օբսիդյան քարի փշրանքներ: Հողի մեջ կային հում աղյուսի կտորներ: Ամրոցի ներսում, ինչպես նաև նրա արեւմտյան լանջում, երևում են քառանկյունի կացարանների պատերի մնացորդներ:

Բարձունքի հյուսիսային ստորոտում գյուղացիները երկու մետր խորութիւնից գտել են սյան երկու քարե խարիսխ, սրանց հետ նաև միջին մեծութիւն մի կարաս: Գտնվել է նաև կիսափտած մի գերան և մի սրբատաշ բազալտ քար (0,63×0,55×0,24 խորանարդ մետր): Քարի մի կողմը կլորացված է, որ հիշեցնում է քիվի քար:

Ամրոցում ջուր չկա, սակայն գյուղացիների պատմելով, վերևի լեռնային աղբյուրի շրջակայքում վարելիս գտել են կավե փողրակների կտորներ, և ենթադրվում է, որ ջուրը այդ կավե խողովակներով բերվել է ամրոց: 1931 թվ. Ղարանլուղ (Վ. Կզնուտ) գյուղում գտնվել է մի արամեատառ սորձանագրութիւն: Արձանագրութիւնը գտնվում է Հայաստանի Պետական պատմական թանգարանում:

Ամրոցի շրջակայքում, ինչպես նաև Ղարանլուղ գյուղի և Մարտունու միջև ընկած տարածութիւն վրա կան բազմաթիվ դամբարաններ:

Մարտունի ավանի ամրաց-շենը (հանույթ 66): Մարտունի (Ներքին Կզնուտ) հարավային ժայռու-

մասում, Մարտունի—Ղարանլուղ ճանապարհից դեպի ձախ, ժամանակակից գերեզմանոցի կողքին չափազորվեց մի ամրոց-շեն: Այն գտնվում է Զոշ կող լեռան շարունակության հյուսիսային լանջի վրա: Ամրոց-շենը կիսաշրջանաձև է, նրա հարավ-արևմտյան կողմը ունի կրկնապարիսպ, որը անջատել է միջնաբերդը: Ամրոց-շենը զբաղեցնում է բնդամենը մեկ հեկտար մակերես, որը ծածկված է կացարանների ավերակներով: Ավերակների մեջ պարզորոշ երևում են նաև միջնադարյան կառույցների հետքերը:

Ամրոցի միջնաբերդը (40×30 մետր) իր արևմտյան, հարավային և արևելյան պարսպամասերում ունեցել է համաչափ մեծության չորս (7×7 մետր) աշտարակ, որոնցից երկուսը միջնապարըսպի և ընդհանուր պարսպի հանգույցներում են:

Գլխավոր մուտքը հավանորեն եղել է ամրոցի արևելյան պարսպի վրա և, ըստ երևույթին, դեպի մուտք տանող ճանապարհը պատնեշված է եղել, քանի որ շարված քարերի մի շարքը տեղում երեւում է:

Քյուրդի կողի և Ալոյի կողի ամրոցները (հանույթ 67 և 68): Մարտունու շրջանի երկրորդ խմբի ամրոցներին ենք վերագրում նաև Վաղաշեն գյուղից 1—1,5 կիլոմետր դեպի հարավ, Վարդենիս լեռնաշղթայի հյուսիսային լանջում եղած վերը նշված ամրոցները, որոնք ընկնում են Մարտունու արվարձանում եղած ամրոց-շենի գծի վրա՝ 2,5—3 կիլոմետր հեռու: Այս ամրոցները միմյանցից հեռու են կես կիլոմետրով, նրանց բաժանում է մի խոր ձոր:

Քյուրդի ամրոցը նման է փակված պայտի, գրավում է կես հեկտար տարածություն, պարիսպներն ունեն չորս մետր լայնություն, շարված անտաշ ու անշաղախ բազալտ խոշոր քարերով, մեջը լցված մանր քար ու խիճ:

Ամրոցն ունի հինգ քարաբուրգ, որոնցից երկուսը կառուցված են ամրոցի մուտքի աջ և ձախ կողմերում, երկուսը՝ հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան անկյուններում, հինգերորդ աշտարակը կանգնած է պարսպի հյուսիս-արևելյան ժայռաբլրակի վրա, որը օգտագործվել է որպես պարիսպ, ինչպես այդ տեսանք այլ ամրոցներում (լճաշեն): Աշտարակներն ունեն տարրեր մեծություն (9×4 և 7×2,5):

Ամրոցը և շրջակայքը դեպի հարավ ծածկված են կացարանների մնացորդներով:

Ալոյի կողի ամրոցը, համեմատվելով վերը նկա-

րագրված ամրոցի հետ, ավելի մեծ տարածություն է գրավում (մոտ մեկ հեկտար), ունի միջնապարիսպ, որը ամրոցը բաժանում է երկու համարյա հավասար մասերի՝ արևելյան և արևմտյան: Արևմտյան մասի հարավ-արևելյան անկյունում գտնվում է մուտքը, որի երկու կողմերում երևում են քարաբուրգերի մնացորդներ: Նման աշտարակներ կան նաև միջնապարսպի ու ընդհանուր պարսպի միացման անկյուններում: Աշտարակները ունեն 5×5 մեծություն:

Պարիսպների ու աշտարակների կառուցման տեխնիկան միանգամայն համընկնում է Քյուրդի կողի ամրոցի կառուցման տեխնիկային, ուստի դրանք երկուսն էլ կարելի է համարել միևնույն ժամանակվա կառույցներ:

Ամրոցում և նրանից դուրս բազմաթիվ կացարանների ավերակներ կան, նրա հյուսիսային պարըսպի երկայնությամբ, արևելքից արևմուտք ընկած է ժայռապատ մի ոչ բարձր բլուր, որի խորշերը, ըստ երևույթին, ծառայել են որպես կացարաններ: Ամրոցից դեպի հարավ, վարելահողում եղած քարակույտերը հավանաբար դամբարաններ են:

Ծրկու ամրոցներն էլ զուրկ են մշտական ջրից:

Այս ամրոցները շնայած իրենց դիրքով գերիշխում են շրջապատի վրա, հատկապես Սևանա լճի կողմը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ նրանք խոշոր ռազմական դեր խաղալ չէին կարող երկրի պաշտպանության գործում: Հետևաբար այս ամրոցները ունեցել են տեղական պաշտպանական նշանակություն և գուցե այս երկրի կյանքում զգալի դեր են խաղացել անասնապահության գործում:

Մարտունու շրջանի կիլոպյան ամրոցների երրորդ խումբը կազմված է չորս ամրոցից, որոնք տեղադրված են Սևանա լճի հարավ-արևելյան սփիին: Այս խմբի կենտրոնական ամրոցը, հավանաբար եղել է Ծովինար և Ալուչալու գյուղերի միջև եղած ամրոցը:

Թեյշբեախնի կամ Օձաբերդ ամրոցը (հանույթ 69) կառուցված է մի բարձրավանդակի վրա, որն իր ժայռոտ եզրերով հյուսիսից նայում է Սևանա լճին և արևելքից՝ զառիվայր իջնում դեպի Ալուչալու գյուղը, իսկ հարավից՝ Վարդենիսի լեռների հետ միանալով՝ գնում դեպի Կարճաղբյուր գյուղը: Արևմուտքից սարահարթի լանջերը քիչ թեթևություն ունեն:

Արևմտյան լանջի քիչ թեթևությունը ամրոցի կառուցողներին ստիպել է լանջը ամրացնել հզոր պարիսպներով և բարձր քարաբուրգերով:

Ամրոցը բնակատեղիով գրավում է մոտ 18 հեկտար տարածություն, որից միջնաբերդը՝ մեկ ու կես հեկտար: Միջնաբերդի և ամրոցի արևմտյան ընդհանուր, լարաշար պարիսպը ձգվում է արևմուտքից արևելք և ապա թեքվում մի թևով՝ դեպի հարավ-արևելք, մյուսով՝ հյուսիս-արևելք: Վերջինիս երկարությունը հասնում է 250 մետրի, արտաքին կողմից ունի համաչափ հեռավորություն (10 մ.) վրա զետեղված որմնահերցեր:

Հարավային պարիսպը, թեքվելով դեպի հարավ-արևելք, հակառակորդի աչքից ծածկել է գլխավոր ճանապարհը: Ճանապարհի մյուս կողմով նույնպես անցել է պարիսպ, սակայն ավելի թույլ:

Գլխավոր պարիսպը շարունակվում է դեպի հյուսիս-արևելք, պաշտպանելով դեպի ամրոց տանող երկրորդ ճանապարհը, որի մյուս կողմը նույնպես պաշտպանված է: Այսպիսով, ամրոց են մտնում երկու լայն ճանապարհ, որոնք արևելյան կողմից գնալով դեպի միջնաբերդ, պարսպի մոտ միանում են:

Ամրոցը, բացի իր գլխավոր պարսպից, ունի նաև երկրորդ պարիսպ, որը շրջապատել է ոչ միայն ամրոցն ու միջնաբերդը, այլև նրանց շրջակայքում դասավորված բնակելի թաղամասերը:

Միջնաբերդը գրավում է ամրոցի գերիշխող մասը և ունի քառանկյունի ձև, միայն նրա հարավ-արևմտյան անկյունը ավելի սուր է: Միջնաբերդի հյուսիս-արևմտյան պարսպի կենտրոնում կա մի մուտք, որը հավանորեն ծառայել է հետիոտն մարդկանց և հեծյալների համար: Նրա լայնքը հագիվ երկու մետր է, իր երկու կողմերում ունի դեպի ներս նախող աշտարակներ, իսկ դեպի դուրս երևում են որմնահերցեր: Այս նեղ ճանապարհը ոլորապարտույտ իջնում է հյուսիս-արևմտյան լանջով դեպի բնակավայրը և վերջանում բնակավայրի մուտքի մոտ:

Ամրոցի մուտքի մոտ կանգնած են եղել երկու հզոր աշտարակ. այստեղից մի ուղղահայաց պարիսպ բարձրանում և միանում է միջնաբերդի հարավ-արևմտյան անկյանը, ուր կառուցված է ամենահզոր աշտարակը: Նրա կողքին նշմարվում է հաստ պարիսպներով շրջապատված մի կացարան, որի մի պատը միջնաբերդի պարիսպն է: Նման մի աշտարակ էլ, քիչ ավելի թույլ, կա պարսպի հյուսիս-արևմտյան անկյունում:

Ժամանակակից Մարտունի-Քասարգեչար խճուղին, կտրելով ամրոցի բարձունքը, այն բաժանել է երկու անհավասար մասի. հարավ-արևելյան մասում

մնացել են բնակավայրի մի մասը, ամրոցը և միջնաբերդը, մյուս մասում՝ միայն բնակավայրի մի փոքր մասը, այն էլ հետագայում ծածկվել է Սեվանի ջրերով, երբ բարձրացել է լճի մակարդակը:

Նշված ճանապարհից դեպի հյուսիս-արևմուտք, 25—30 մետր հեռավորության վրա, մի քարածայրի ճակատին գտնվում է ուրարտական թագավոր Ռուսա I-ի սեպագիր արձանագրությունը:

Այս արձանագրությունից գիտենք, որ Սարգուրիի որդի Ռուսան նվաճել է այստեղ արդեն գոյություն ունեցող մի ամրոց, որը պատկանելիս է եղել այդտեղի ցեղին (պրոֆ. Գր. Ղափանցյանը այն վերագրում է Ադախունի երկրին): Ուստի, Ուրարտուի թագավորը, գրավելով այնտեղ գոյություն ունեցող ամրոցը, նորից նույն տեղում կառուցել կամ վերակառուցել է հինը և անվանել Թեյշեբախինի ամրոց:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ ամրոցի հիմնական պարիսպները և որոշ աշտարակներ վերակառուցված են, բացի դրանից, ամրոցի ներսում և շրջակա բնակավայրում տարբեր ժամանակաշրջանների կառուցվածքներ կան: Այստեղ մենք բերել ենք բնակարանների պատերի մի շարք շափագրություններ (աղյուսակ 70), որտեղ պարզ երևում են նախաուրարտական ժամանակաշրջանի կիկլոպյան տիպի քարե պատի մի հատված և ուրարտական շրջանի բնակարանի պատի կտրվածքը, որոնք շարված են շթրծած աղյուսով: Բացի այդ ամրոցի և հատկապես միջնաբերդի գլխավոր պարիսպները և քարաբուրգերը վերակառուցված են, նրանց արտաքին երեսները շարված են տաշված քարերով, և դրանց ողորկ կողմերը դարձված են դեպի դուրս:

Օձաբերդը, որը նույն Թեյշեբախինին է, հավանաբար ունեցել է խմելու ջուր, օգտագործելով Վարդենիսի լեռներից հոսող բազմաթիվ աղբյուրների ջրերը:

Այսպիսով, ուրարտական ամրոց Թեյշեբախինին Սևանա լճի հարավային ափին հանդիսացել է ուրարտական թագավորության հենակետը, իր ձեռքում պահելով շրջակա տեղաբնիկ ցեղերին, ինչպես խաղի քաղաքը Ուելիբուխի երկրում:

Վանքի բերդը (հանույթ 71): Աստղաձոր գյուղից 4 կիլոմետր հարավ, Վարդենիսի լեռնաշղթայի լանջերին կան բազմաթիվ միջնադարյան ավերված բնակավայրեր, այդ թվում՝ մեկը, որը մեր կարծիքով ավելի վաղ ժամանակների մշակույթի մնացուկ է: Դրան աստղաձորցիները Վանքի ամրոց կամ բերդ են հռչակում: Այդ անունը կապված է ամ-

բոցի պարիսպների ներսում մի խոնարհված վանքի առկայության հետ, ոչը կառուցվել է ավելի ուշ քան ամրոցը:

Ամրոցը կանգնած է մի թամբարթ հրվանդանի հյուսիսային մասում: Այն իր զբաղեցրած տարածությունը մոտ 2000 քմ է, որի համար կարելի է այն համարել միջնաբերդ, նրա շուրջը, առավելապես դեպի հարավ-արևելք, տարածված բնակավայրի համար: Միջնաբերդն ունի պայտի ձև, որի կլորացած մասը դարձված է դեպի հյուսիս-արևմուտք:

Պատերը շարված են կիկլոպյան այլ ամրոցների պատերի նման, 3,5 մետր լայնությամբ, միայն այստեղ քարերը ավելի փոքր են, սակայն դարձյալ անտաշ ու առանց շաղախի:

Ի տարբերություն մեզ ծանոթ ամրոցների, այս ամրոցում հայտնաբերված երկու աշտարակները կիսաշրջանաձև են, որոնք դուրս են բերված ամրոցի հարավը, հարավ-արևմտյան պարիսպների անկյուններում: Այս ձևի քարաբուրգերը հիշեցնում են միջնադարյան ամրոցի աշտարակներ: Հավանական է, որ այստեղ միջին դարերում վանք կառուցելիս վերակառուցել են նաև միջնաբերդի պարիսպներն ու աշտարակները:

Միջնաբերդի պարիսպներից դուրս և ներսում եղած տարածությունները ծածկված են կացարանների ավերակներով: Ավերակների պատերի կառուցման տեխնիկան համապատասխանում է պարիսպների կառուցմանը, տները հիմնականում ունեն քառակուսի ձև:

Այս ամրոցը ամենաթույլ պաշտպանվածն է եղել, հավանորեն մի քանի անգամ վերակառուցվել և վերջում հանդիսացել է վանքի ագարակը:

Ամրոցից քիչ հեռու, ձորակում կա մի սառնորակ աղբյուր, որի ջրից էլ ըստ երևույթին, օգտվել են բնակավայրի ու միջնաբերդի ապրողները:

Բրուտի բերդը (հանույթ 72): Երրորդ խմբի ամրոցներին ենք վերագրում նաև Ալուշալու գյուղից շորս կիլոմետր դեպի արևելք գտնվող, այսպես կոչված, Բրուտի բերդը:

Ամրոցը կառուցված է փոքրիշատե հարթ բլրի գագաթին, որն ընկած է հյուսիս-հարավ ուղղությամբ: Բարձունքի լանջերը երեք կողմից համարյա հավասար թեքությամբ իջնում են դեպի ստորոտները, բացի արևելյան լանջից, որը ավելի դժվարամատչելի է և թեքությամբ իջնում է դեպի խոր ձորը: Ամրոցը գրավում է կես հեկտար տարածություն:

Պարիսպների վրա հայտնաբերվեցին հինգ աշտարակ, որոնք դասավորված են ամրոցի շորս անկյուններում, մեկը հյուսիսային պարսպի գրեթե կենտրոնում է: Պարիսպների լայնությունը շորս մետր է, անշաղախ ու անտաշ քարերից: Մուտքը գտնվում է հարավային պարսպի կենտրոնում և ունի երեք մետր լայնություն:

Ամրոցը, մեր կարծիքով, ունեցել է տեղական պաշտպանական նշանակություն, ինչպես վերը նշված մի շարք այլ ամրոցներ:

Ամրոցում և նրանից դուրս երևում են բազմաթիվ բնակարանների ավերակներ, տների պատերի կառուցման տեխնիկան նման է ամրոցի պարիսպների կառուցմանը:

Ամրոցում և նրա մոտակա շրջակայքում ջուր չկա:

«Խըռբեֆի» կամ «Քաֆթարլի» բերդը (հանույթ 73): Վարդենիկ (Գեղացկաձոր կամ Ազնվաձոր) գյուղից դեպի հարավ, երեք կիլոմետր Վարդենիս դեռի ձախ ափի երկայնությամբ, խիստ ժայռապատ, մի խումբ բլուրների վրա, որոնք ընկած են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, կանգնած է եղել մի հզոր կիկլոպյան ամրոց, որը տեղացիները Խըռբեֆի (Ավերակների) բերդ են անվանում: Այս բերդը շրջապատված է բազմաթիվ հնագույն և միջնադարյան բնակավայրերով, դամբարաններով ու գերեզմաններով:

Ամրոցն ունի շուրջ 800 մետր երկարություն, լայնությունը հյուսիսային և հարավային մասերում 60—70 մետրից չի անցնում, իսկ ամրոցի կենտրոնական մասում 150 մետր է:

Այս ամրոցը շրջապատված չէ պարիսպներով: Դրանց հետքերը երևում են միայն արևմտյան կողմից, մնացած կողմերը պարիսպներ չունեն, քանի որ այն Վարդենիս գետը շրջանցել է, և ստացվել է մի թերակղզի, որի երեք կողմերը ունեն ուղղաձիգ, ժայռապատ զառիթափ, որը իջնում է մինչև գետի հունը:

Ամրոցն իր ամբողջ երկարությամբ, նույնանման խոշոր բազալտ քարերով շարված՝ միջնապարիսպներով բաժանված է վեց անհավասար բաժանմունքների, որոնցից երեքը թերակղզու հյուսիս-արևմտյան մասում են, իսկ երեքը՝ հարավում:

Ամրոցի այդպիսի կառուցվածքը միանգամայն համապատասխանում է վայրի տեղադրությանը: Ամրոցի հյուսիսային ու հարավային բլրախմբերը գերիշխում են շրջապատի վրա: Այդ բլրախմբերը բաժանված են մի փոքր լեռնանցքով, որտեղից ե-

զել են մուտքեր դեպի բլուրները վրա կառուցված ամրութիւնները, դեպի նշված թերակղզու վրա տեղադրված բնակավայրի հիմնական մասը: Այդ թերակղզու հյուսիսային լանջով իշնում է մի կածան դեպի Վարդենիս գետը և նրա ձախ ափում գտնվող աղբյուրը, որտեղից բերդի բնակիչները կարող էին ջուր վերցնել, եթէ նույնիսկ ամրոցն ու շէնը շրջապատված լինեին թշնամու կողմից:

Հարավ-արևելյան ամենավերջին և ամենախոշոր բաժանմունքի հյուսիս-արևմտյան անկյունից ժայռապատ լանջով դեպի արևմուտք է իջնում կիկլոպյան պարիսպը և հասնում դամբարանադաշտին: Այդ պարիսպը հավանորեն ունեցել է հատող նշանակութիւն: Թշնամու ներխուժման ժամանակ ամրոցի որևէ մասում պարիսպը պիտի արգելակեր նրան՝ անցնելու ամրոցի մյուս մասերը:

Ամրոցի բաժանմունքների գրեթէ բոլոր անկյուններում եղել են աշտարակներ, թվով 12, որոնցից ութը կառուցված է արևմտյան պարսպի վրա: Նըրանք ունեն հավասար մեծութիւն, քառանկյունի ձև և դուրս են բերված սլարսպի արտաքին երեսը:

"Պարիսպներն ու քարաբուրգերը հիմնականում ավերված են, տեղ-տեղ հազիվ մնացել են մեկ-երկու շարքով: Կան հատվածներ՝ 5—6 մ. բարձրութեամբ:

Պարիսպների լայնութիւնը հիմնականում երեք մետր է, սակայն պատասխանատու տեղերում ավելի լայն է: Շարվածքը անտաշ քարերից է, առանց շաղախի օգտագործման, խոշոր քարերից, երկշարի մեջ լցված է ավելի մանր քար:

Այս ամրոցը իր կառուցմամբ և տեղադրմամբ հիշեցնում է Սևան քաղաքի մոտի Մեծեփ ամրոցը:

Փակագծի մեջ ասենք, որ ամրոցի արևմտյան կողմում, որտեղ միջնադարյան գյուղն է եղել, մի տապանաքարի վրա կարդացինք Քաֆթարլի գյուղի անունը: Նույն անվանը հանդիպեցինք Մարտունի ավանի եկեղեցու բակում, մի այլ տապանաքարի, որի վրա գրված է, որ հանգուցյալը Քաֆթարլի գյուղից էր:

Այս ամրոցից քիչ ներքև, Վարդենիս գետի աջ ափին, ժայռերի վրա կան ժայռապատկերներ՝ հայտնաբերված Ս. Գ. Բարխուդարյանի կողմից:

## ԲԱՍՍՂԳԵԶԱՐԻ ՇՐՋԱՆԻ ԿԻԿՆՊՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Այն երեք ամրոցները, որոնք գտնվում են, ժամանակակից վարչատնտեսական բաժանմամբ, Բասարգեչարի շրջանում, կազմում են Մարտունու շրջանում եղած ամրոցների շարունակությունը Սեվանա լճի հարավային ու հարավ-արևելյան ափերին:

Այս ամրոցների երկիրը մինչուրարտական տիրապետության շրջանում կոչվել է Արկուկինի, ինչպես դա երևում է ուրարտական թագավոր Սարգուրիի սեպագիր արձանագրությունից, որը փորագրված է Մովակ գյուղի հարավում գտնվող մի բարձր ժայռի ճակատին:

Քարե-դուռ կամ Տաշ-կափու ամրոցը (հանույթ 74): Կարճադրյուր գյուղի հարավ-արևելյան կողմի սարահարթում գտնվում են ավերված կիկլոպյան ամրոցի ավերակները: Այդ շենը կոչվում է Քարե-դուռ (Տաշ-Կափու) այն բանի համար, որ այդտեղ եղած քրիստոնեական երկու սրբավայրերի դռները շինված են հսկայական բազալտ քարից:

Ամրոցը գրավում է շուրջ հինգ հեկտար տարածություն, որից ավելի քան մեկ հեկտարը միջնաբերդին է բաժին ընկնում: Ամրոցը և իր շրջակա շենը երեք կողմից շրջապատված են գահավեժ ցած իջնող, համարյա անմատչելի լանջերով, որոնց ներքևում, շրջանցելով սարահարթը, հոսում է գետակը դեպի Սևանա լիճը:

Քարե-դուռ ամրոցը, կառուցված լինելով վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային սարահարթ լանջերից մեկի վրա, իր դիրքով ու բարձրությամբ իշխում է շրջապատում ընկած հարթ տարածությունների վրա և այնտեղից դիտվում է Սևանի ողջ մակերեսը, այնպես, ինչպես Սևան, քաղաքի մոտի Մեծեփ ամրոցից: Բացի դրանից, ամրոցից դեպի արևելք շարունակվում են վարդենիսի լեռնաշղթայի լանջերը. աստիճանաբար «կզբից» գնալով

ներս՝ դեպի հարավ, հետո դուրս գալով հասնում մինչև Մովակ գյուղի մոտի ամրոցը, որը Քարե-դուռ ամրոցի գծից որպես հրվանդան դուրս է եկել դեպի լիճը՝ կազմելով մի աղեղնաձև լեռնաշար, իրեն մեջ առնելով մի հսկայական արգավանդ հարթավայր, որը դարեր շարունակ կերակրել է իր մշակողին:

Ամրոցի միջնաբերդը կառուցված է սարահարթի առավել բարձր տեղամասում և շրջապատված է մինչև այժմ պահպանված պարիսպներով: Միջնաբերդն ունի կլոր ձև, հիշեցնում է Հերի-դարի ամրոցը: Միջնաբերդի պարիսպները շարված են անմշակ, բազալտ քարերից, հարմարեցված միմյանց, հարթ կողերը՝ դեպի դուրս: Պարսպի լայնությունը չորս մետր է: Մուտքի բացվածքը դարձած է դեպի արևմուտք, նրա աջ ու ձախ կողմերում երևում են երկու հզոր քարաբուրգերի հետքեր (7×7 մետր), պարսպի արտաքին կողմից նշմարվում են որմնահեցերի հետքեր: Բացի այդ, պարսպի հարավ-արևմտյան մասում, գլխավոր մուտքից 20 մետր հեռու, 30 մետր երկարությամբ և 4 մետր լայնությամբ երևում են հենապատի մնացորդներ (աղյուսակ 75):

Միջնաբերդն ունի նաև երկրորդ մուտք, որն իր կառուցմամբ նման չէ առաջինին: Այս մուտքը դարձված է դեպի հարավ-արևելք: Պարսպի մեջ չկա պարզորոշ մուտքի բացվածքը, այլ հակընդդեմ պարիսպների վերջավորությունները գալիս ու միմյանց կողքով անցնում են 8—10 մետր, որոնց մեջ գոյանում է երկու մետր լայնք ունեցող ճանապարհ դեպի միջնաբերդը, այնպես, որ պարիսպների կանգուն ժամանակ մի քանի մետր հեռավորությունից նույնիսկ չէր կարելի մուտքի տեղը որոշել, որը կարծես գաղտնուղու դեր է կատարել:

Միջնաբերդի ներսում նկատելի են բնակարան-



ների ու կացարանների խառնիխուռն թափված պատերի ավերակներ, որոնք իրենց կառուցման տեխնիկայով չեն տարբերվում պարսպի կառուցումից, բացի այն, որ այստեղ պատերը ավելի բարակ են, իսկ քարերը՝ մանր: Այստեղ երևում են նաև միջնադարյան խաչքարեր:

Միջնաբերդը, ինչպես վերը ասվեց, գրավում է ամրոցի առավել բարձր մասը և շրջապատված է բազմաթիվ կացարաններով:

Բնակավայրում, որը այժմ վեր է ածված վարելահողի, այնուամենայնիվ, պարզորոշ երևում են տների ավերակները՝ տարածված միջնաբերդի հարավային և արևելյան կողմերում: Բնակավայրում գոյութուն ունի նաև առանձին խումբ կացարանների ընդհանուր պարսպապատում, որը համեմատած միջնաբերդի պարիսպների հետ, ավելի նեղ է ու քարերն էլ՝ փոքր: Բնակավայրի հարավային մասում են գտնվում քարե դուռ-մատուռները, որոնք մի գուցե նախաքրիստոնեական մի սրբավայր են եղել:

Գլխավոր ճանապարհը դեպի ամրոց սկսվում է բարձունքի արևելյան ստորոտից և հյուսիսային կողմով ոլորապտուլտ բարձրանալով գնում դեպի արևմուտք, աստիճանաբար դառնալով հարավ-արևելք, գլխավոր մուտքից մտնում միջնաբերդը, իսկ շարունակութունը՝ դեպի բնակավայրը: Այս ճանապարհը օգտագործվում է նաև այժմ: Մի այլ ճանապարհ, որի մի մասը երևում է բնակավայրի հարավ-արևելյան ծայրամասում, տանում է ուղիղ միջնաբերդ: Երկու ճանապարհներն էլ պատնեղված են եղել առավելապես արտաքին կողմերից, և այդ ճանապարհով աղատ կարող էր շարժվել ժամանակի ամեն տեսակի անիվավոր գումակ:

Ինչպես բնակավայրում, նույնպես և միջնաբերդում կան խեցեղենի բազմաթիվ մանր բեկորներ, օբսիդիանի փշրանքներ, կենդանիների ոսկորներ, մակույկաձև աղորիքի կտորներ և այլն:

Ամրոցից դեպի հարավ և հարավ-արևելք հայտնաբերվեցին երկու գոլմեններ, որոնցից մեկը վեր է ածվել քրիստոնեական պաշտամունքի վայրի, որի վերին սալաքարի վրա դրվել է խաչքար:

Ամրոցն ու միջնաբերդը ջրով կարող էին ապահովված լինել:

Մովակի ամրոցը (հանույթ 76): Մովակ գյուղի մոտի կիկլոպյան ամրոցը տեղավորված է գյուղի հարավային և արևմտյան կողմերում գտնվող բարձունքի վրա, որը իր շրջապատի նկատմամբ բարձր է 50—60 մետրով: Հրվանդանը, որի վրա գտնվում

է ամրոցը, մտնում է լճի մեջ, լճի այժմյան ափերը բավականին հեռացել են: Այդ վայրը մնացել է սոսկ որպես բարձրագիր սարահարթ, որպիսին եղել է նաև այդ ամրոցի շինարարության ժամանակաշրջանում: Գտնվելով մի այդպիսի գերիշխող բարձունքի վրա, Մովակի ամրոցը մի անանցանելի պատվար է հանդիսացել արևելքից դեպի հարավ Սևանի ավազանը ներխուժող օտար ցեղերի ու ցեղախմբերի դեմ, այնպես, ինչպես լճաշենի ամրոցը՝ հյուսիսում:

Ամրոցը և նրան հարող բնակավայրը բավական մեծ ու ընդարձակ են: Նրանց երկարութունը հյուսիսից հարավ ավելի քան 700 մետր է, լայնութունը՝ 500 մետր: Այսպիսով, Մովակի ամրոցը իր բնակատեղիով գրավել է շուրջ 3,5 քառակուսի կիլոմետր: Դա մեզ ծանոթ ամրոցներից ամենամեծն է:

Ամրոցի շրջակայքում կան բազմաթիվ դամբարաններ, որոնց պեղումներով 1906 թվականին զբաղվել է Երվանդ Լալայանը: Հայտնաբերված նյութերը գտնվում են Վրաստանի պետական թանգարանում: Այդ նյութերը տարբեր էպոխաների են պատկանում, սակայն հիմնականում թվագրվում են I հազարամյակի երկրորդ քառորդով (մ. թ. ա.):

Մարտունի—Բասարգեշար ժամանակակից խճուղին, ամրոցն ու բնակատեղին բաժանել է երկու անհավասար մասերի, ինչպես այդ արվել է Օձաբերդում: Այստեղ ճանապարհը, բարձրանալով բնակատեղիի արևմտյան ծայրամասով, առնչվում է լայնածավալ հովտին, որի մյուս վերջավորության վրա գտնվում է Քարե-դուռ ամրոցը: Ծանապարհը այնուհետև շարունակվում է բնակատեղիով, իր ձախ կողմում թողնելով միջնաբերդը, որը կենդանի ձևով խրված է եղել լճի մեջ: Այն իր երեք կողմով վերջանում է անմատչելի զառիթափով, իսկ հարավային մասը ձուլվում է բնակատեղիի հետ:

Հզոր պարսպապատնեղների շնորհիվ ամրոցը բոլոր կողմերից անմատչելի է դարձել: Պարիսպների և կացարանների պատերի կառուցման տեխնիկան նույնն է: Խոշոր, անտաշ բազալտ քարերից անշաղախ շարված են պատերն ու պարիսպները:

Վանի թագավորության նվաճողները հասել են այս ամրոցին, ջախջախել նրա տերերին և, ավերելով ամրոցը, կառուցել կամ վերակառուցել են այն՝ ըստ իրենց պահանջների: Ամրոցի հյուսիսային եզրի ժայռի վրա թողել են մի սեպագիր արձանագրութուն. որի միջոցով իմանում ենք, որ այդ ամ-

րոցը և իր շրջապատող վայրերը կոչվել են Արթուկինի երկիր (աղյուսակ 77):

Միջնաբերդից դեպի արևելք, սեպագիր արձանագրութիւնից 20—30 մետր դեպի ճանապարհը կան բազմաթիվ քարանձավներ, որոնք նույնպես կացարաններ են եղել: Քարանձավներից երկուսը մանրազնին ուսումնասիրվեցին (առանց պեղումների կատարելու), որոնց մասին մի քանի տվյալներ կրեթենք ստորև:

